

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ՄԵՏԻՆ

# ԿԱՐՈԿՈՒՄԻ ԱՎԱԶՈՒՏՆԵՐՈՒՄ



891.71  
Ա - 54

ԽՍՀՄ ԺՈՂՈՎ ՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈԽԿԱՅ:

1931

ՀԱՅԱՍՏԱՆ

# ՊԱՌԱՐՄԱՐ ԱԼՈՎԵՑԴՈՅԲԻ



ՀԱՅՈՑ ԱՆՁԱՐԱՐՄԱՐ ԱԼՈՎԵՑԴՈՅ ՎԱՅ  
1881

Ա. ՄԻՏԻՆ

19 NOV 2010

891.71

0-54

Կ. Հ.

# ԿԱՐԱԿՈՒՄԻ ԱՎԱԶՈՒՏՆԵՐՈՒՄ

1006  
29462

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈԽԿԱ

1931



ԱՅՏՎՈՒՅՈՒՆ

Թարգմ. Խ. Ռ.

## ԱՄՐՈՑՆԵՐԻ ՔԱՂԱՔԸ

Ամու—Դարյա գետի շուրջը փռված Դարդան-Ատասաղիսի վրա իշխում եր յերեկոն։ Կիզիչ և շիկացած որը թեքվում եր դեպի վերջալույսը։ Գետից զովություն եր փչում։ Կանաչ դաշտերը, վորոնք շրջապատել եյին ուղիսը, դալկանում եյին փոշու ալեխառն ամպի տակ։

Մի քանի որ եր, ինչ ավազուտներում ուրագանը փոթորկում եր։ Ուղիսի պուրակները փոշուց գորշ-պողպատի գույն եյին ընդունել։ Մոայլ, հողոտ կանաչի զանգվածից բարձրանում եյին կավածեփ անվերջ պատերի շարքերը։

Ամբողջ ավանը անսովոր մոայլ տեսք ուներ։ Ամեն տուն, իր պտղատու այգով ու բանջարանոցով, շրջափակված եր չորս կողմից անմատչելի պատերով։ Բարձրասլաց մինարեները մայր մտնող արևի ճառագայթների տակ յերեան եյին հանում իրենց սև ճեղքերը։ Կլոր աշտարակները բարձրանում եյին անկյուններից։ Վիթխարի դարպասները, վորոնք ժամանակից արդեն ժանդուել եյին, — նման եյին բանտի դարպասների։

Ներսից պատերի յերկայնքով անցնում եյին լայն փորվածքներ։ Նրանց վրա, մինարեյին մոտիկ, տեղավորված եյին բերդ-տաճախառները։ Դարպասների վրա պատը առաջ եր գալիս և նրա վրա դրված եյին ջրով լի խոշոր տակառներ։ Պաշարման կամ դարպասները վառելու վուե փորձի զեպքում, տակառները շուռ եյին տրվում մի կողքի և ջուրը հոսում եր դարպասներին՝ պատերի փորվածքների միջով։

Ուղիսը, վորը ուներ մոտ հազար բնակիչ, բաղկացած եր տասից վոչ ավել շրջափակված անտեսանելի տներից։ Ամեն մի ամրության մեջ մի քանի սերնդից բաղկացած ընտանիք եր ապրում։ Ամեն մի ամրություն ուներ իր ջուրը, մթերքները և վառելքը։ Կանայք գործվածքներ ու գորգեր եյին պատրաստում։ Նրանք եյին նույնպես հավաքում պտուղները այզիներից, վորոնք սկսվում եյին բերդի պատերից և համատարած փուել — ծածկել եյին վողջ ուղիսը։

Հատ ու կենտ մարդկային ձայները իրիկնային աղջամուղում փոշոտ ճամբին խլանում եյին հետըզ-հետե, կավածեփ և լուակյաց ամրությունները անքնակելի եյին թվում։


Արևածագին, ներքեւում սկսում եր աշխուժը։ Ներփակված տուն-ամրությունները մեծ առևտուր եյին անում։ Այդ ժամին ուղիսում բնակվող ուղբեկները շուկայից աներն եյին գնում։

Դարգան-Ատան («Լոցմանների հայր») լիովին արդարացնում եր իր անունը։ Ամեն անգամ անցնող

շոգենավը վերցնում ե իր հետ ուղեկցողի, քանի վոր Դարյայի ֆարվատերը \* յերկու շաբաթվա մեջ միանգամայն փոխվել եր։

Բնակիչները գետի կյանքը գիտեյին և նրանցից յուրաքանչյուրը կարող եր անվտանգ կերպով նավը անցկացնել փոփոխակի ծանծաղուտներով։ Ուղեկցելով շոգենավը, նրանք միշտ ապրանք եյին պատվիրում։

Ապրանքային նավահանգստի շարքում վորպես շարան՝ կանգնել եյին ծածկերը։ Այստեղ բազարն եր։



Ուղբեկները առևտուր եյին անում քոչվոր յոմուղների հետ։ \*\* Ապրանքների մեծամասնությունը տանն եր լինում։ Ծածկի տակ եր միայն այն, — ինչ վոր կարելի յեր մի որում ծախել։

Այժմ, մայրամուտի դեմ շուկան լի յեր սայլերի ճոխնչով, ամբոխի ժխորով և քշողների գոռոցներով։

\* Ֆարվատեր կոչվում ե գետի այն ուղին, վորը ամենից ապահով և նավագնացության համար։

\*\* Յոմուղ՝ թուրքմենական քոչվոր մի ցեղ եւ։

Վաճառականները, մետաքսե զոլավոր խալաթներով, ցրվում եյին իրենց տները, առևտրական որից հետո: Փոշու ամպերը վորոնք աղջամուղջի մեջ անտեսանելի եյին, բարձրանում եյին վեր, արեի վերջին հանգչող ճառագայթների տակ, ծառերի գագաթներին, քուլաքուլա կուտակվելով:

Վիթխարի բերդային դարպասները ճռչում եյին, ներս առնելով ուղիսի բնակիչներին:

Չոքը ընկնելու պես բերդի ներսում սկսեց կյանքը յեռալ, կացնի թրիսկոցը, իրիկնային մի յերգ, տնային կենդանիների մոլտոցը, մարդկանց զրույցը մի տնից մյուս տունն եր անցնում, յերեկոյան փլավի բուրմունքի հետ:

Ուղիսը շրջապատող դաշտերից վերադառնում եյին ուշացած աշխատավորները: Դրանք ընտանիքի կրտսեր անդամներն եյին, վորոնք դաշտերում աշխատում եյին, այն ժամանակ յերբ ծերունիները առետուր եյին անում: Նրանք արևարքից սեացած, ջահել և հուժկու մարդիկ եյին: Անցնում եյին նրանք բոբիկ վուներով, մի տակ սպիտակեղենով, հաճախ չիե շապիկ-վարտիքով, վորոնք վեր եյին քաշված մինչև ծընկները: Ամեն մեկի ականջի յետեկց քաշ եր արված կարմիր կամ դեղին ծաղիկ, Յերբ դարպասները նրանց առաջ բացվեցին, խարույկները մի ակնթարթում լուսավորեցին գլխի մաքուր, ձյունափայլ և վառ նաշխերով չալմաները, վորոնք նմանում եյին գիշերային ծաղիկների:

Անկյունային աշտարակներին մարդիկ յերկացին վորոնք զննեցին պատերը և իրար ձայն տվին: Բայց պահնորդների ձայներում լսվում եր թախծուա յերկուղածություն: Մարտական ուղբեկները, վորոնք մի քանի հարյուրամյակ առաջ գրավել եյին այս յերկերը, — վաղուց վերասերվել եյին և դարձել հնագանդ և խաղաղասեր յերկրագործներ:

Այժմյան ուղբեկները ունեյին փաղաքուշ և միքիչ ել տրտում աչքեր, վորոնք ինչպես կանանց աչքերը՝ մի քիչ խոնավ եյին, ուղիղ և կանոնավոր քթեր, ու նշան յեղունգներով գեղեցիկ մատներ, բացի դրանից, նրանք ունեյին հանգիստ և դանդաղ շարժումներ ու առևտրական խոշոր հեռատեսություն:

Պարտված յոմուղները այնուամենայնիվ մնացին կիսավայրենի քոչվորներ, բայց չնայած հարյուրամյակներին, — նրանք պահպանում եյին ինչ-վոր հեռու հյուսիսից յեկած հաղթողներին դուրս քշելու ցնորքները, Նրանք վրիժուուր եյին վոչ միայն իսկական հաղթողներին, այլ և նրանց, ովքեր հնագանդվում եյին յեկվորներին, այդ խաղաղ յերկրագործներին: Նրանք չփոխվեցին այն բանից, վորիբենք, հաղթողները փոխվելով դարձան տուրտինչիներ<sup>\*</sup> և հայտարարեցին վոր յոմուղը, ուղբեկը և ուռուսը,<sup>\*\*</sup> իրենց յերկրի տերն են և ախպերները:

Գիշատիչ, հապճեպ և հանդուգն կերպով նրանք ամեն մի հնարավոր դեպքում հարձակվում եյին ու-

\* Տուրտինչիներ — բոյլշեիկներ:

\*\* Ուռուս, — ուռու:

զիսի վրա։ Վոչ վոք նույնիսկ մոտավորապես չգիտե՞  
նրանց թիվը։

Վերջին որերը սկսվել եյին սպառնալից լուրեր տա-  
րածվել։ Յոմուղները ամբողջ ջոկատներով հորդել եյին  
ուղիսի մոտերքը և դրա համար ել գիշերային պահ-  
նորդների ձայները հնչում եյին ցած և անվստահ։

### ՅՈՄՈՒԴՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Սպիտակահեր, լուսնի նման, հին մարդարեյի  
պես— Զունախիդ խանը վորոշեց պատմության անփը  
շրջել, նա համախմբեց յոմուղներին և արդավանդ  
հողի համար սկսեց կորիվ մղել։ Ամենից առաջ նա գրա-  
վեց բոլոր ճանապարհները։



Հին ժամանակներից ի վեր  
կործանված բերդերի մոտեր-  
քում ջրհորներ եյին մնացել։  
Նրանց մոտով անցնում եյին  
առետրական ճանապարհները։  
Զունախիդ խանը ջրհորների  
մոտ կանգնեցրեց ոպառազին-  
ված հովիմների և սկսեց ուզ-  
բեկային քարվաններից հարկ հավաքել։

Յեթե ջրհորին կարմիրբանակայինների ջոկատ եր  
մոտենում, — յոմուղները նստում եյին ձիյերին և  
մի ակնթարթում անհետանում եյին առաջին խոկ ավա-  
զաբլրի յետև։ Ամեն մի քարավան, վորը մոտենում եր  
ջրհորին, կրակոցների յեր հանդիպում։

Ուղաբերը ջրելու և մի քանի տիկ աղի ջրի համար  
վաճառականները տալիս եյին ամբողջ հակերով մե-  
տաքս, արկղերով թեյ, գորգերի փաթեթներ և չորա-  
ցրած մրգի պարկեր։ Իսկ յեթե նրանք թույլ չեյին  
տալիս իրենց այդպես կողոպտել, — ապա յոմուղները  
դեն եյին քշում ուղաբերին ջուր խմելուց։ Առաջ  
շարժվող քարավանը իր ուղաբերի կեսը կորցնում եր։

Յերկու տարուց հետո Զունախիդ խանը մի քանի  
տասնյակ սպառագեն հովիմներից կազմված շքախումբ  
ուներ։ Բայց հին ավազակը վոչ վոքի չեր վստահում։  
Նամազի ժամանակ, յերբ խանը հանում եր վրայից  
զենքերը, ամբողջ թիկնապահ խումբը կոնակը դեպի  
նրան արած, կիսաշրջան ձեռվ կանգնում եր։ Ով վոր  
յերեսով դառնար դեպի զինաթափ խանը, նա մահվան  
եր դատապարտվում։

Իր ուտեստի մեջ չափազանց սակավապետ և քչա-  
կեր լինելով, — խանը արագորեն հովիմների աշքում  
սրբի համբավ ստացավ, — թեպետ նրա դաժանությունը  
սահման չուներ։

Բոնված խաղաղ բնակիչներին ամբողջ ամբոխնե-  
րով բերում եյին նրա յուրտի մոտ, և Զունախիդը իր  
հավասար և մեղմ ձայնով սովորաբար հրամայում եր  
բոլորին ծեծել։ Դահիճները անզեն մարդկանց վրա եյին  
ընկնում, իսկ խանը վեհորեն և խաղաղ գնում եր  
նամազ անելու։

Վերջին տարիներին նա դեպի Պարսկաստան ուղար-  
կեց մի քանի մաքսանենդ քարավաններ, 1918 թվի  
կեց մի քանի մաքսանենդ քարավաններ, 1918 թվի

աշնանը նա իրեն բավականաչափ ուժեղ զգաց: Ինչպես միշտ, զիշերները նրա յուրափառ շուրջը խարույկներ ելին վառվում: Սպառապեն յոմուղները անշարժ կանգնած՝ պահպանում ելին խանին: Յեկանադարձ առ ձիյերի վրա ինչշոր մարդիկ յերևացին և հեռվից սկսեցին պայմանական խոսքեր աղաղակել: Անքնությունից հոգնատանջ խանը պատասխանեց նրանց յուրափառ, — և պահնորդը նրանց թույլ տվեց ներս մտնել:

Մի քանի որից հետո, Զունախիդ խանը թիկնապահներով շրջապատված, շարժվեց Խիւայի\* վրա: Որը յերկու անգամ ավազաթմբերի յետեկից դուրս ելին յելնում յոմուղների բազմաքանակ ջոկատները նրան դիմավորելու: Հեծյալները լոելայն խոնարհվում ելին ձիյերի բաշերին, հենց վոր տեսնում ելին սրբին, և նույնպես լոելայն հետեւում ելին նրան: Յերբ խանը մոտեցավ Խիւային նա ձեռքով ցույց տվեց քաղաքը և իր անհույզ ձայնով արտասանեց: —

— Բոլորին մորթել:

Յերեք որ Խիւան այրվում եր և բոլոր փողոցներում արյունահեղ կոփսներ ելին տեղի ունենում: Հետո կարմիր հեծելազորը յերևաց և կոտորածը սաստկացավ: Մի ամբողջ շաբաթ ծերունի խանը կովով մո-

\* Խիւա, — (Խորեզմ) մինչև հեղափոխությունը իրենից ներկայացում եր սուսական բուրժուազիայի գաղութ դարձած մի խանություն: Գտնվում ե Ամուշարյայի ստորին հոսանքում, — մինչև Արալյան ծովը: Գլխավոր քաղաքը Խիւան է:

տենում եր սահմանին: Նա կորցրեց մարդկանց կեսը, մինչև կարողացավ Պարսկաստան ձգել իրեն:

Անցավ վեց տարի: Ուզբեկները մտածում եին վոր Զունախիդ խանի բանը պրծավ: Նրա մասին լեզենդներ եին պատմվում և յերգեր յերգվում: Բայց 1924 թվի ամառը Դարյայի վրա ընկած ուղիսներում խուճապ բարձրացավ: Ամենքը խոսում ելին խանի Պարսկաստանից շուտով վերադառնալու մասին: Բնակիչները սկսեցին ապուպապերից մնացած բերդերը վերանորոգել, զինվել, և ուժեղացրած պահակախմբեր նշանակել զիշերներին: Յոմուղները ամբողջ անապատից հորդեցին դեպի ուղիսները: Ճիշտ ե, նրանք անզեն ելին, բայց հենց նրանց յերևալն ու զիշատիչ լրբությունը յերկրագործներին սարսափ եր ներշնչում:

## ԱԳՐԱՎԻ ՀԱՇԻՎՆԵՐԸ

Հզոր Զունախիդ խանին, նրա հարձակման դեպքում, հակադրեցին մի եսկադրոն և մի հին պղնձե թնդանոթ: Այդ եսկադրոնը պիտի պահպաներ Դարյայի վրա յեղած բոլոր ուղիսներն ու կարակումի ավազուաներ մի ամբողջ շերտ՝ յերկու հարյուր կիլոմետր յերկարությամբ:

Յերբ թնդանոթը Զալանաչ ուղիսը բերին, բարձրացավ հիացմունքի և դարմանքի փոթորիկ: Բնակիչները համբերությամբ գնում ելին թանձր փոշու միջով, վորը բարձրանում եր թնդանոթի անիվներից: Զար-

մացած ուղբեկները ձեռքերով դիպչում եյին արկից շիկացած պղնձին և որորում եյին զլուխները։ Չորս դեղին ուղտեր հպարտությամբ գնում եյին առջեռվ և քաշ եյին տալիս իրենց յետեից թնդանոթը։ Եսկադրոնը քառատրոփ սլացավ առաջ և տեղավորվեց ամենամեծ տան բերդային պարսպի յետե։ Կես ժամից հետո բերդի դարպաններին յերեաց եսկադրոնի հրամանատարը, դիմավորելու հրանոթին։



Հրամանատարը մի վոչ-բարձրահասակ և լղար մարդ եր, թվում եր թե նա մինչեւ ուղն ու ծուծը կիզված եր արեով և փոշոտված կարակումի ավագներով։ Նրա քիթը յերկար և ուղիղ եր ու նմանում եր կտուցի։ Կանաչավուն աչքերում վոստոստում եյին կատվային բիբերը։ Յերբ նա ծիծաղում եր, նրա վողջ մրկված դեմքին ծալքեր ելին գոյանում, իսկ քիթը ավելի առաջ եր ընկնում։ Ծոծրակին, զունաթափ գլխարկից ցած, կարճ մազերը վեր եյին ցցվում ինչպես փետուրներ։ Յերբ նա նայում եր ուսի վրայով կամ դիտում եր

շուրջը՝ սովորաբար մի փոքր հակում եր գլուխը մի կողմի վրա։ Այդ ըովեյին նա չափազանց նմանում եր թռչնի և այդ պատճառով ել նա ստացել եր Ագուավ մականունը։

Նա մի քանի արշավանքներ եր կատարել Զունախդի խանի դեմ և այժմ փաղաքուշ հեգնանքով նայում եր այն թնդանոթին, վորն իրեն եյին կապել։ Նա մտովին պատկերացրեց ուղտերի մի ամբողջ շարք, վորը քաշում եր նրան ավաղուտով։ Նա ժպտաց և մտածեց, վոր անշուշտ ավելի լավ կլիներ, յեթե թնդանոթը խանին պատկաներ։ Մըրկի պես արագ սուրացող խանի ջոկատը կսկսեր սողալ կրիայի պես, կամ ինչպես յեզը՝ վարելիս։

Եսկադրոնի հրամանատարը անցավ բակով, թռուցիկ և ուշադիր դիտեց կարմիրբանակայիններին, վորոնք մաքրում եյին ձիյերն ու զենքերը և ուղերձեց դեպի տուն։ Զոլ սենյակում, փովելով մետաքսի վերմակին, նա սկսեց խորհել։ Յերկու որ առաջ մի գաղտնի հաղորդագրություն ստացվեց այն մասին, վոր խանը Պարսկաստանից անցնելու յե Զալանաչ ուազիսի վրայով։ Շատ տարիներ Ագուավը մասնակցել եր խանի դեմ մղվող կոփիներին։ Կովի ձևերը փոփոխվել եյին, խանի ուժերը աճել, բայց այդ կովում ամենազլվածը միշտ մի բանն եր մնում, — ջուրը։

Յերկու տարի Ագուավը եսկադրոնի համար ձիյեր եր ջոկում, թուրքմենական ձիյերը յերկու որ կարող եյին առանց ջրի դիմանալ։ Ուղտերը ցողոտ գիշերնե-

ըին, յերբ անապատում փշերը խոնավ եյին ցողից, — կարող եյին յերեք որից ավել գնալ, առանց ջուր ստանալու:

Վորպեսզի տոթից ջրի գոլովացումն պակասեցնի, Ազուավը հրամայեց ջրամանաները վերից սպիտակ թաղիքով կարել: Հետագայում նա համոզվեց վոր այդ ձեռվ ջրամանաներում ջուրը սովորականից մի քանի որով ավելի յերկար ե պահպանվում: Մոտ յերեք տարի յեր ինչ Ազուավը գնդացիրայիններին սովորեցնում եր ուղաբերի վրա գնալ:

Ազուավը քարտեղ ճարեց, դրեց իր առաջ և իր կլոր աչքերը սուզեց նրա մեջ: Ամեն ինչ լավ ե, կարգավորված և պատրաստված, բայց բոլոր բարդ հաշիվները, մարդկանց վարժեցումը, նույնիսկ սպառազիւնումը, — ամեն ինչ կարող եր փոխվել՝ նայած թե փորտեղից եր անցնելու Զունաիդ խանը:

— Յեթե եստեղ . . . — փնթինթաց Ազուավը, մատները տանելով համատարած ավազուտների վրայով. — նա կարիճի պես ավազից չի վախենում: Եղ դեպքում ինձ պետք ե տասնեմեկ որ նրա յետեից ճանապարհ գնալ:

Եսկադրոնի հրամանատարը լոեց և յետ ընկավ բարձին:

— Հարկավոր ե բամբակից խալաթներ վերցնել: Գիշերը անապատում սաստիկ ցուրտ ե . . . Մթերք, փամփուշտներ: . . . և անպայման գնդացիր:

Յեվ նրա ուղեղում սովորականի պես սկսեցին նշվել զանազան քանակի մթերքներ, փթերի թվեր, վորոնք անհրաժեշտ եյին պարենավորման համար: — Իսկ յեթե եսպես անցնի . . .

Հրամանատարի մատները դանդաղ շարժվեցին ուղիսի վրայով, իսկ դեմքը ավելի յերկյուղալից եր դառնում: Հետո նա փակեց աչքերը: Թվում եր թե նա տեսնում ե ինչ վոր բան վորը սարսափեցնում ե նրան:

— Այ թե ինչեր ե անելու, հա, — ասաց վերջապես նա բարձրաձայն և լուելով, քիչ հետո նորից բարձրաձայն սկսեց իր դատողությունները: Նա սկսեց խոսել կարճ և վճռական, կարծես հրամաններ արձակելով.

— Միայն ջուր լինի, — մնացածը ջիաննամը: Առանց ուղտերի կցնամ: Մթերքը ամեն մեկը իր հետ կվերցնի: Մի որում կհասնեմ: Խալաթները մնան: Առանց դրանց ել շոգ կլինի: Մի գնդացիր, պահեստի ձիյերի վրա ջուր — և հայդա:

Ազուավը քարտեղը թագցրեց գրպանում և նորից սկսեց խորհել: Նա վոչնչի չհանզեց և իրեն շատ վատ եր զգում: Հետո նա ցած ձայնով հրամաններ տվեց հերթապահին:

Սենյակը մտավ յոմուղ ուղեցույց Մահոման և նստեց դռանը: Ազուավը նրան ամեն բանում հավատում եր, Ածիփի նման սև, սուր, վիշտափէ դեմքով և յերկար ավազակային բեխերով, — Մահոման համ-

բերությամբ նստել և լուսմ եր: Նա լսեց հրամանատարի բոլոր մտահոգությունները, հետո վերցրեց մի դարմանի ցողուն և սկսեց յերկար տեղավորել իր ցցված մատին, ջանալով հավասարակշռությունը պահպանել:

— Ի՞նչպես ե կոչվում ես, — հարցրեց նա ոռւսերեն:

— Կշեռք, — պատասխանեց եսկաղըռնի հրամանատարը:

Մահոման աշխուժացավ և սկսեց խոսել իր լեզվով.

— Բախտը այ եսպես բռնելու յե Ծարավի կշեռքը, — նա մարտականորեն պարզեց ձեռքը առաջ, Նրա հայցքը դարձավ վայրի և մոայլ:

— Ես կողմից մենք ենք լինելու, ես կողմից— Զունաիդ խանը: Ամեն մեկը պիտի արյուն և ջուր լցնի կշեռքի վրա: Բայց ում մոտ վոր շատ ջուր յեղավ, — նա ել կհաղթի:

Մահոման մի թատրոնական շարժում կատարեց և լուց:

— Եղ յես առանց քեզ ել գիտեմ, վոր ջուր ե պետք, — մի քիչ նեղացած ասաց Ազուավը:

— Իսկ հետո եսպես կլինի, — հանդիսավոր կերպով շարունակեց Մահոման, — աչքերը վեր բաձրացնելով: Ո՛, Ծարավ! Վերցրու քո կշեռքը: Դու տեսնում ես, — ես նժարը բարձրացավ: Վերցրու խանի արյունը և թափիր արկի տակ, վողջ կարակումի ավագուտներով:

Մահոման լուց, — սպասելով տեսնել հրամանատարի դեմքին հիացմունք և զարմանք, Բայց նրա

յերկար քիթով և կլոր, կանաչ աչքերով կարմիր դեմքը սկեռված եր նրա վրա առանց վորեե արտահայտության:

— Բայց վհր տեղն ե նա գնալու: Ի՞նչ վերցնել և ինչ չվերցնել, — նորից հարցըրեց եսկաղըռնի հրամանատարը:

Մահոման լուռ եր:

— Դու, ախալեր ջան, իսկի զահըռումար ել չգիտես, — տիրությամբ վրա բերեց Ազուավը:


Նա գրպանը կոխեց քարտեզը և յերկուսն ել դուրս յեկան:

1006  
28/462

## ԱՌԱՋԻՆ ՀԱՐՎԱԾԸ

Ուշ գիշերին վողջ ոազիսովը մեծ շները սկսեցին վունալ: Բերդի պարսպապատ բակում ձին կատաղաբար դոփում եր: Թույլ և կամացուկ մի հարված դարպասին՝ վոտքի հանեց գիշերապահին, Արթնացած Ազուավը մոտեցավ դարպասին:

Փողոցից բացված անցքից ներս նետվեց ձին: Նա կորած եր փրփուրի մեջ և ամբողջ մարմնով դողում եր: Ուղիդ հրամանատարի վոտքին՝ թամբից ցած սողաց մի մարդ, Գիշերապահը լապտերը մոտեցրեց: Ծեր ուղբեկը կանգնած չորքոտանու նման՝ դժվարությամբ եր բարձրացնում գլուխը: Մի վայրկյան նա ասես թե անհետացավ խավարում: Լապտերը յերիտասարդ կարմիր բանակալինի՝ Ճեղքում որորվեց: Հետո լապ-



տերի լուսեղեն շրջագիծը նորից ընկավ գետնին և  
կրկին լուսավորվեց մարդկային արյունութեա զիմակը:  
Վիրավորի միրուքը արյունով թրչվել եր: Ականջների  
և քթի փոխարեն վերքեր եյին սեին տալիս: Տանջված  
մարդը կամացուկ մի բան շշնջաց, բայց Ագռավը վոչինչ  
չհասկացավ:

— Դարգանատա, — («Լոցմանների հայրը») վորո-  
շակի կերպով ասաց վերջապես վիրավորը:

— Ահազանդ: — Ասես արձագանք տվեց Ագռավը  
գրկելով յերեսով առաջ ընկնող ծերունուն, — կանչել  
բուժակին:

Մի քանի վայրկյանից ականջ ծակող պղնձե շեփորը  
սկսեց ահազանգ տալ: Սկսվեց ինչ վոր աներևակա-  
յելի մի բան: Գիշերապահը վազեց դեպի չոր մացառի  
դեզը, վորը ոլատրաստված եր այդ դեպքի համար,  
թափեց նրա վրա քարյուղով լի ամանը և նետեց  
լուցկին: Ամբողջ բակը լուսավորվեց ինչպես ցերեկը:  
Ահաբեկված ուղաբերի հուսահատ մռունչը, ձիյերի  
խրիմնջը և արշավող հեծյալների դոփյունը, — բոլորը  
բռնկվեց բոցի նման և նրա պես ել արագ հանգեց: Բակի  
մեջտեղում, մթության մեջ կանգնել եյին ձիավորնե-  
րի ամրակուռ շարքերը:

— Ուղաբերը թող յետեից գան: Հբանոթի մոտ  
թողնել գնդացիր և տասը մարդ: ՀԵծ-նել:

Խիտ շարքերը քառատրոփ հորդեցին և անթափանց  
խավարում անհետացան: Գետինը քարոտ եր և ձիյերը  
թեթև եյին ընթանում:

Դիշերային յերկնքին ձգվել եր արշալույսի վար-  
դագույն շերտը: Հետո նա դարձավ ավելի վառ և  
շուտով յերկնքում հրդեհվեց լուսաբացն ու լուսավորեց  
գորշ ավագուտները: Մի ինչ վոր անընդհատ և համա-  
չափ հնչյուն եր լսվում անապատում: Այդ աղմուկը  
լսելի յեր նույնիսկ եսկաղոննի սմբակների տրոփի  
միջից: Հետո նա դարձավ վորոշակի և սկսվեցին պարզ  
լսելի գառնալ մարդկային ձայներ:

— Ո-ո-ղնոտ, վայրիտ, (ոգնության հասեք).

Հեծյալների շարքից մեկը ջղայնորեն ասաց.

— Բնակիչներն են ճշում:

Քիչ հետո սրարշավ յերթը փոխարինվեց հանդարտ  
քայլերի, վորովհետև ճամբան անցնում եր ավազա-  
բըրով: Հետո միանգամից խավարից դուրս յեկավ բո-  
ցավառ ուազիւը: Դա մի հրեղեն համատարած ծով  
եր, Խլացուցիչ կերպով ֆշշում եյին կանաչ ծառերը:  
Նրանց վոստերը կրակի մեջ եյին: Պատերի վրայով  
մարդկային սե ստվերներ եյին ասես թռչկոտում:  
Ուղիսի արվարձանը դեռ անվնաս եր և բոցերի կու-  
րացուցիչ փայլի մեջ, ինչպես մելանով գծավորված  
մուղ ուրվագծեր՝ բարձրանում եյին բարդիները: Կա-  
վեղեն ամրությունները վիթխարի վառարանների եյին  
վերածվել, վորոնց մեջ այրվում եյին մարդիկ իրենց  
ունեցվածքի հետ:

Ագռավը շտապում եր իր եսկաղոնով, և զրեթե  
բոլոր մարդկանց ուղարկեց բնակիչներին ոգնելու:  
Հակառակորդը չկար: Հետախույզը վոչ-վոքի չեր հան-

Դիպել: Բոցերով բռնված ամրություններից մարդկանց փրկելը չափազանց դժվար է: Վոչինչ չհասկացող և չլսող մարդիկ, կոտորածից խելահեղված, վազում ելին պատերով և ճշում, —

— Ոգնեցեք:

Շատերին ուժով վար բերին: Ուզիսում կանայք չկային: Զունախդ խանը նրանց տարել եր իր հետ:


Հրկիղված և վիրավոր ծերունիներին ու յերեխաներին կարմիր-բանակայինները առնում բերում եյին Ազուավի մոտ: Բուժակը հազիվ եր կարողանում գործը գլուխ բերել: Ազուավը վորոշեց մինչև լուսաբացը տեղից չշարժվել: Նա զգուշանում եր պաշարումից և բացի այդ սպասում եր ջրկիր ուղարին:

Յետ ու առաջ որորվելով, իրենց կրծքին խփելով և ընհատելով իրար, վիրավորները մրկված խալաթներում, լացով պատմում եյին դժբախտության մասին: Հարձակումը կատարվել եր միանգամայն, բոլոր դարպասների վրա: Մարդկանց ծեծում եյին ինչպես անսպասների:

Կարմիրբանակայինները վիրավորներին լսում եյին խստ զգացված, բայց Ազուավը սառնարյուն եր: Միայն թե հենց վոր նա իմացավ, վոր խանը տավարը քշել ե, նրա դեմքին գոհունակության պես մի բան վառվեց: Հիմա նա գիտեր վոր խանը չեր կալող արագ շարժվել: Բայց մի ժամից հետո նրա դեմքը մուայլվեց: Ուղարկված յերրորդ առաջապահը յետ քշեց տավարի կեսից ավելին: Զունախդը չեր վերցրել նույն իսկ

կովերը, վորոնք միայն ովազիսներում են կարողանում ապրել: Սովորաբար նա տեղն ու տեղը մորթում եր նրանց և միաը վերցնում եր հետք: Ազուավը տարակուանքի մեջ եր: Ինչու յեր խանը հարձակվել ուղիսի վրա, և նրա դեմքը ավելի եր տագնապալից տեսք ընդունում:

Գորշ լուսաբացի հետ յեկավ նաև լուծումը: Գունատ, իրեն կորցրած կարմիր բանակայինը սլացավ փրփրակալած ձիու վրա:



— Ընկեր հրամանատար: Գիշերը ուղարը բերինք. տկերը ջրով չլցրինք, — մտածեցինք, վոր շուտ լինի, քանի վոր ջուր եստեղ ել կար: Ամբողջ քարավանի վրա մենք հինգ հոգի եյինք: Բայց... բոլոր տկերը ձեղքել եյին: Իսկի չիմացանք ել ով եր անողը: Յեթե ջուր լիներ, ելի կլսեյինք... իսկ ենպես վոչինչ չլսեցինք: Հրամանատարի դեմքը գորշացավ այնպես, ինչպես այն ավազը, վորի վրա նա կանգնել եր:

— Իսկ պահեստի տկերը, — հարցրեց նա:

— Պարանչները կտրեցին: Բոլոր պահեստի տկերը  
մի ուղարքի վրա եյին բարձված: Նրանց ել են գողացել:

Ագռավը վառ յերևակայության տեր մարդ չեր,  
բայց այդ ըոսկեյին նա պատկերացրեց Մահոմային՝  
վորը պատմում եր կշեռքի մասին:

— Տկեր ունեք ջրի համար, Բոլորը կդնեմ, — դան-  
դաղ մրմնջաց Ագռավը մոտեցող ուղբեկին:

— Յերեկ յոմուդները շուկա յեկան և բոլոր տկերը  
գնեցին, — պատասխանեց ծերուկ խանութպանը:

— Բայց ախր յես հրամայել եյի բոլոր ուղիւնե-  
րին տկերը չվաճառել, — ասաց Ագռավը՝ դիմելով  
դեպի ծերունին:

— Նրանք շատ վճարեցին և մենք ծախեցինք, —  
պատասխանեց ծերունին:

— Դուք ծախեցիք ձեր կյանքը, — գոռաց Մահո-  
ման և թքեց ծերունու միրուքին:

Ծերունին մեղավոր կերպով սրբեց միրուքը թե-  
քով և լուց: Մահոման, աներկյուղ նայելով Ագռավի  
չարագուշակ դեմքին՝ ասաց.

— Զունախդ խանը հարձակվեց մեզ վրա և վոչ թե  
Դարգան-Ատայի: Նա դիտեր վոր մենք հետապնդելու  
յենք իրեն և մեզ ջրից զրկեց: Մնացածը կարևոր չի:

Նա անփույթ կերպով քացով տվեց ծխացող  
խանձվածքին:

— Ինչպես կարևոր չի — աղաղակեց ծերունին: Նա  
հաղար գլխից ավել վոչխար քշեց: Նա իր հետ քաշ  
տվեց բոլոր կանանց:

— Ահա թե ինչ, — նա վոչխարներ և վերցրել եր  
հետ, — հարցրեց Ագռավը թեթևացած:

— Ինչու համար հրամանատարը ուրախանում ե,  
յերբ մեզ կողոպտել են, — հարցրեց ծերունին, յերբ  
տեսավ, փոր Ագռավի դեմքին ժպիտ բացվեց:

— Ալլահը ձեզ խնայեց և ալիրեց ձեզ ձեր վոչխար-  
ները, — ասաց Մահոման թեթև ծաղրով: Յերեկ  
հենց եղ վոչխարները ձեզ փրկեն, վորովհետև վոչ վոք  
ենպես կամաց չի գնում, ինչպես վոչխարը: Հիմի  
մենք կարող ենք խանին հետապնդել:

Ագռավը գլխով արավ, հաստատելով Մահոմայի  
մտադրությունը: Զունախդը ծանրաբեռված եր ավա-  
րով: Արշավը միանգամայն հնարավոր եր դեռ: Բացի  
դրանից, իր հետ անասուն ունենալով՝ ավագակը  
պիտի ջրհորների գծով գնար:

Ագռավը մի կողմ քաշվեց, ծխեց և խորասուզվեց  
մտածության մեջ:

## Ո Ւ Զ Բ Ո Յ

Ագռավը վորոշեց դուրս գալ թեթև և արագ: Բնա-  
կիչները մի դեզ դատարկ դգումներ բերին, վորոնք  
պիտի փոխարինեյին տկերին: Նրանց լցրին ջրով և  
արագ քարձեցին ուղտերին, յերկու պարկ լավաշի հետ:

Մոտ մի ժամից հետո ջոկատը դուրս յեկավ, իր  
առաջ ունենալով ջրկիր քարվան: Զոկատը արագ ան-  
ցավ ցանքսերի մոտով և ապա թփերով ծածկված  
ավագաշերտը:

Ցուրտ, սառեցնող գիշերը վերջացավ և արել  
միանդամից սկսեց կիզել։ Ցողից մթնած մացառն ու  
քարը չորացան և սպիտակեցին։

Զոկատը մտավ Ուզբոյ։ Այդպես եր կոչվում  
Ամու - Դարյայի նախկին հունը։ Մի ժամանակ այստեղ  
կյանք կար։ Աղմկոտ և բազմամարդ քաղաքները իրենց  
ժխորավից շուկաներով, շրջապատված եին վոռոգված  
դաշտերով։ Բայց Դարյան ընթացավ ուրիշ հունով և  
յերկիրը կործանվեց։ Կարակումի ավագուտները խեղ-  
դեցին և գետնին հավասարեցրին բոլոր ավերակները։

Ճանապարհի ամենալավ տեղը Ուզբոյն եր համար-  
վում, վորովհետև այստեղ ավագ չկար։ Շիկացած ճա-  
լաքարը մի քանի հարյուր կիլոմետր յերկարությամբ  
և մի կիլոմետր լայնությամբ մի տարածություն՝ ամ-  
բողջովին ծածկել եր։ Ամեն քայլափոխին կոփված  
սմբակները սահում եին և կըճտում։ Զիյերը գրեթե  
մինչև ծնկները խրվում եին քարերի մեջ։

Հեռու, մի կողմի վրա, բարձր անդունդի յեզրին,  
վորը մի ժամանակ յեղերք եր յեղել, սյուներ եին  
ցցվել։ Դրանք ծառեր եին։ Վոսկը պես կարծր, զուրկ  
կեղեց և վոստերից, նրանք այն ժամանակից, յերբ  
այստեղ գետ ե հոսել, մինչև այսոր կանգնել են։ Քամի-  
ներից և դժոխի յեղանակներից նրանք նույնիսկ վառելու  
համար անպետքացել եին։ Յերբ վոր վառվում եին  
նրանք, տաքություն չեին տալիս։

Գորշ ոձերը ամբողջ կույտերով պառկել եին  
մեծ քարերի ստվերներում։ Մարդիկ և ձիյերը ամեն

մի քայլին միապաղադ կերպով տատանում եյին  
գլուխները։

Մուայլ, հրկիղված յերկինքը արձնի ձուլվածքով  
եր պատել։ Զոր ոդը դողում եր և շիկացած քարերի  
վրա յեր հոսում է կեսորին, յերբ արևը բարձրացավ  
գլխավերել և հեծյալի ամբողջ ստվերը տեղավորվում  
եր ձիու փորի տակ՝ Ագռավը թույլատրեց ջրամաննե-  
րից ջուր խմել, ապա նախազգուշացրեց, վոր մինչև  
յերեկո չի թույլ տա խմել։

Ռոպեաչափ հանգստից հետո եսկադրոնը շարունա-  
կեց իր ճանապարհը։ Զիյերի վոտները վիրավոր եյին։  
Զոկատը իր յետեռում թողնում եր արնով թրջված քա-  
րեր։ Շուտով, հանգստից հետո, Ագռավը հրամայեց  
Մահոմային վերցնել հինգ մարդ և դիտել ավերակ-  
ները, վորոնք յերեռում եյին մի կողմի վրաւ նա գի-  
տեր, վոր այդտեղ ջրհոր պիտի լիներ։ Մահոման մնկ-  
նեց, բայց շուտով վերադարձավ յերկյուղած հայաց-  
քով և զեկուցեց, վոր ջրհորը լցված ե քարերով, նա  
ավելացրեց վոր ջրհորի շուրջը շատ հետքեր կային և,  
ինչպես յերեռում ե, այնտեղ քիչ առաջ անասուն են  
ջրել։

Ագռավը որորեց գլուխը և շոկատը առաջ տարավ։  
Նա չեր սպասում, վոր ավաղակը ջրհորները պիտի լցնի։  
Զուր ամենից ավելի իրենց, յոմուդներին եր պետք։  
Զուրը փչացնելը կարակումի անապատներում ամենից  
ծանր հանցագործությունն եր համարվում։ Բայց ահա  
նրա մեջ մի միտք ծագեց, վորով նա զվարթացավ։

Նա հիմա հաստատ գիտեր, վոր առջեռում գնում ե ինքը, Զունափիդ խանը: Վոչ վոք բացի նրանից չեր հանդզնի ջրհորները քարով լցնել: Բացի դրանից նա հասկացավ, վոր խանը հեռու չի և գնում ե վոչ այնքան մեծ ջոկատով: Նա վախենում ե հետապնդող եսկադրոնից և ուղում ե իր և ջոկատի միջև մեկ կամ յերկու որվա անջուր ճանապարհ թողնել:

Վոչ հեռու, մի կողմի վրա յերեաց արյունոտ փառասի կույտ: Առջեռում յերեռում ելին ծիշտ այնպիսի արյուտ հետքեր քարերի վրա, վորպիսին իր յետեռում թողնում եր ջոկատը:

— Նրանց ձիյերի վոտները մինչև ծնկները փալասով են փաթաթված յեղել, — բացատրեց Մահոման:

— Իսկ ինչու դու ինձ ևս խորհուրդ չտվիր նույնապես վարվել, — ասաց Ագռավը խոռվահույզ:

— Նրանք ուզեցել են իրենց հետքը թագցնել: Բայց մեզ հարկավոր եր արագ գնալ: Տեսնում ես մենք նրան հասնում ենք:

— Իսկ ինչու աժմ նրանք սկսեցին դեն շպրտել իրենց փալասները, — հարցը Ագռավը:

— Նրանք ել մեզանից չեն վախենում, — պատասխանեց Մահոման, — նրանք գիտեն, վոր մենք դդումներով ենք գալիս: Դգումներում ջուրը արագ ե չորանում: Հիմա մեզ ջուրը հերիք կանի միայն վերադարձի համար: Ավելի ուշ մենք ել չենք կարողանա վերադառնալ, վճռիր:

Մի բոպե Ագռավը տատանվեց, հետո պատասխանեց:

— Մինչև վաղը մենք կդիմանանք: Զրի կեսից ավելին չի չորանա: Վաղը յերեկոյան յես ամբողջ ջուրը կտամ մարդկանց և ձիյերին ու մի որում կհասնեմ խանին:

Ագռավը լոեց և առաջ անցավ արնաշաղախ փալասների մոտով, ասես արհամարհելով մի սպառնալից նախազգուշացում:

Որն անցավ տիսուր և տանջալից: Մարդիկ միայն այն մասին ելին մտածում, թե յերբ կգա յերեկոն, վոպեսզի ջրամաններից մի փոքր ջուր խմեն:

Յերեկոյան աղջամուղին քարելից տոթ եր զգացվում, բայց ողը այնպես ցրտեց, վոր հեծյալների ատամները սկսեցին կափկափել: Հետո իսկույն գիշերն իջավ և ցուրտը անհանդուրժելի դարձավ: Ուղարին շրջանաձև պառկեցըին: Մարդիկ վողջ գիշեր դողում ելին, ջանալով քարերի վրա տաքանալ:

Լուսաբացի դեմ, յերբ կարմիր-բանակայինները ծանր քնի մեջ ելին ընկղմել՝ Ագռավը անխղճորեն բոլորին զարթեցը և ջոկատը առաջ շարժվեց: Մարդկանց կուշտ խմացըին և մի-մի ջրաման ել պահեստի ջուր տվին: Թուրքմենական ձիյերը, վորոնք հեշտությամբ ելին դիմանում ծարավին, միայն ջրամանի չափ ջուր ստացան: Ուղարին մի ժամի չափ արածեցին, վորոճալով ցողից թաց մացառը: Ագռավը առանց կանգ առնելու ջոկատը առաջ եր տանում մինչև կեսորը:

Յերկու անգամ Մահոման թեքվեց ճամբից և վերադարձավ՝ հայտնելով վոր ջրհորները լցված են: Զու-

նաիդ խանը կուշտ ու կուռ խմացնելով իր մարդկանց և անասուններին, առաջ եր անցնում, ջրհորները վոչնչացնելով։

Կեսորին Ագուավը մարդկանց թույլ տվեց բերանաերը միայն թրջել և կես ժամվա հանգստից հետո, ել մինչև յերեկո թույլ չտվեց կանգ առնել։ Նա ասես թե ծարավից չեր նեղվում, միայն յերեսը մթնել եր, իսկ աչքերին արյուն եր իջել։

Յերեկոյան Մահոման նորից ուզեց խոսք բաց անել վերադարձի մասին։ Նա մտիկ տվեց ձիավորների շարքերը, ապա խղճահարությամբ չպալացրեց լեզուն, վորը նշանակում թե նա ուզում է խոսել, բայց հրամանատարը արևելյան ճոռոմ խոսակցություն լսելու տրամադրություն չուներ։

## ՏԱՆՉԱՆՔՆԵՐ ԱՎԱԶՈՒՏՈՒՄ

Խոշոր, միգամած աստղերը առկայծում եյին փոշոտ, ցուրտ յերկնքում, Մարդիկ տնքում եյին և տրորվում յեղյամով ծածկված քարերին։ Զիյերից թամբերը վար չեյին առել, վորպեսզի կոնակները չմրսեն։ Զիավորները պառկել եյին՝ ձեռներին սանձերը կապած, Զիյերը, ծարավից հյուծված, նիրհել եյին։ Միքանի նժույգներ քնած կարմիրբանակայինների ձեռքից չկարողանալով պոկ գալ՝ տարտամորեն թափառում եյին ուղտերի շուրջը, ջրի բուրմունքը առնելով։

Հրամանատարը մտադիր եր առավոտյան ամբողջ ջուրը մարդկանց և ձիյերին տալ, թողնել ուղտերին

և ինչքան հնարավոր ե արագ առաջ գնալ, Բայց աժմ նրան սաստիկ անհանգստացնում եր ավելի ու ավելի ուժեղացող ցուրտը։ Նա հրամայեց Մահոմային մացառ հավաքել և խարույկ պատրաստել։ Նա ուզում եր վար բերել ջրով լի դդումները կրակին մոտ։ Ուշ գիշերին Մահոման յեկավ, Նա արթնացրեց Ագուավին և շփոթված շնչաց, վոր մացառ չկա։

— Ի՞նչ յեղան մացառները, — հարցրեց Ագուավը, դեռևս լավ չսթափված։ Նա դողում եր ցըտից, աշխատում եր ատամներն իրար չխփել, բայց հազիվ եր բառերն արտասանում։

— Ներիր, բոլորը հրդեհել են, — պատասխանեց Մահոման։ — Յես շատ հեռուներն յեղա, բայց ամեն տեղ մոխիր եր։ Այդ խանն ե արել, վոր մենք չկարողանանք ջուր տաքացնել։

Վերջին խոսքերը Ագուավին ստիպեցին վեր թռչել։ Նա շտապով գնաց ուղաբերի մոտ։ Յոմուդը հետևեց նրան։ Քարավանի մոտ խրինջում եյին ձիյերը։ Ագուավը չըթացրեց լուցկին և նույն վարյկյանին նրանք ցնցվեցին իրենց տեսածից։

Զիյերը, ծարավից հյուծված, լափում եյին խոնավ ավազը։ Ագուավը նետվեց դեպի դդումները։ Նրանք պղպջակի պես թեթև եյին։ Առաջին անգամ, պատերազմի այն տարիներին, եսկաղըռնի հրամանատարը դդաց, վոր ծնկները դողում են և գլուխը պտտվում։ Առավոտյան նա մտադիր եր բոլոր ջուրը տալ մարդկանց և անասուններին և այդ դեպքում ջոկատը մի որվա կյանք կունենար, իսկ այժմ . . .

Ագուավը իրար յետեից բաց եր անում դպումնելը  
և ձեռքը կոխում եր մեջը: Նրանք դատարկ եյին և մի-  
այն տակը սառույց կար կապած: Խոնավ, դողդոշուն  
ձեռքերով Ագուավը նորից վառեց լուցկին և սկսեց զի-  
տել մոտիկ յերկու դդումները: Նրանց վրա ճեղքվածք-  
ներ կային: Ինչպես յերևում եր ջուրը մի փոքր  
պատել եր սառցով, բայց դա յել բավական եր, վոր-  
պեսզի դդումները ճաքեյին: Զուրը ճաքած տեղերից  
դուրս եր յեկել և տակը մնացել եր սառցի կառը:

Մահոման նստել եր ավազի վրա և լալիս եր: Նրա  
մոտ և շուրջը ամեն տեղ յերևում եյին թափված ջրերից  
գոյացած մեծ բծեր: Ագուավը տեսավ, վոր հինգ կարմիր  
բանակայինները մոտենում են իրենց ձիյերը բունելու:  
Մի ակնթարթ նրան տիրեց հզոր մի ցանկություն՝  
վերցնել մի բուռ խոնավ ավազ բերանում և ծարավը  
խաբել: Մի ինչ-վոր համառ ձայն նրան պնդում եր,—  
սառույցը ամաններում հալչում ե և ջուրը ավազի  
վրա յե հոսում: Նա ագահորեն լիզեց իր պաղ և խո-  
նավ ձեռներն ու սթափվեց:

Առավոտյան մարդիկ կտեսնեն թափված ջուրը...  
Նա մինչեւ անգամ վախենում եր մտածել, թե ինչ կա-  
րող ե պատահել: Ընկած և ճռնչող ձայնով նա հայ-  
նոյեց ձիյերը բաց թողնող կարմիր-բանակայիններին  
և հրամայեց ճամբա ընկնել:

Նա չբացատրեց ապշահար կարմիր-բանակայիննե-  
րին, թե ինչու համար ձիյերը ավազ են ուտում: Յերբ

մարդիկ որորվելով նստան ձիյերին՝ Մահոման մոտե-  
ցավ նրան և շշուկով ասաց.

— Յեթե վաղը մենք խանին չհասնենք՝ մենք  
կործանվենք:

Ագուավը վոչինչ չպատասխանեց և ձիգով բարձրա-  
ցավ թամբին:

Զոկատը շարժվեց և մի քանի ժամից հետո նորից  
քարերի վրա սպիտակ մի բոց փուլեց և որը բացվեց:  
Առաջվա նման անդունդի գլխին ծառեր եյին ցցված,  
վորոնք նման եյին հեռագրասյուների:

Մինչեւ կեսորը Մահոման նորից հանդիպեց ճամբին  
ընկած մի ջրհորի և համոզվեց, վոր լցված ե: Ագուավը  
սպարզ տեսնում եր, վոր ջոկատը կործանվում է:  
Ձիյերը որորվելով և ընկնելով առաջանում եյին, վոտ-  
ները քարերին խփելով ու արնոտելով: Ձիավորները  
հարբածների նման տարութերվում եյին: Վոչ մի մարդ  
չեր ասի այժմ, թե ուր ե գնում ինքը և ինչպես  
ընկավ նա այստեղ: Բոլորի ձեռքերը փոշուց և արևից  
գորշացել և ծալծալվել եյին՝ ինչպես կրիայի կաշին:  
Թույլ և անոգնական կերպով, սանձը բաց թողած, նրանք  
բռնում եյին թրի շիկացած կոթը կամ հանում եյին,  
չզիտես թե ինչու, ծխախոտի դատարկ քսակը: Շա-  
պիկն ու վարտիքը բազմաթիվ անգամ թրջվելով և չո-  
րանալով քրտնքից, կարտոնի նման դրված եյին  
նրանց մարմնին և ծակում եյին նրանց: Ագուավը  
ինքն ել լավ չեր իմանում, թե յերբ ծագեց արել:

Յետեռում ցուրտ խավար եր: Անապատում՝ անցկացրած զիշերները ձուլվում և խառնվում եյին մթին բծերի հետ և ամեն ըոպե շաղվում եյին: Աչքերը լույսից անտանելի կերպով ցավում եյին:

Մի կարճ ակնթարթով հեծյալը կորցնում ե գիտակցությունը, մինչև մյուս ըոպեյին սառեցուցիչ ցուրտը արդեն բռնում եր նրա փողջ մարմինը: Յերբեմն Ագուավին թվում եր, վոր հենց մի ըոպե առաջ գլխի վրա աղոտ շողում եր փոշոտ սառնամանիքային գիշերը խուսափուկ աստղերով: Մահուման մացառ եր փենտրում և լալիս եր: Նրա բոլոր վոսկորները ցրտից ջարդվում ելին և ամեն ինչ յերազ եր՝ նման տենդային զառանցանքին:

Հյուծված ձին ընկավ ծնկների վրա և Ագուավը սթափելով՝ նայեց բոլորին: Նրանք որորվում եյին վոչթե յետ ու առաջ, այլ աջ ու ձախ: Ասես շատ հեռվից հասավ Մահումայի ձայնը:

— Ուղտերը շատ թեթև են գնում: Յեթե ձիավորներն իմանան՝ մենք ամենքս մեռնելու յենք:

— Ճիշտ ես ասում, — պատասխանեց Ագուավը: Նա թափահարեց իր վրա ծանրացած մաշող նիրճը և մոտենալով քարավանին՝ գնդացիրայիններին ասաց, —

— Յես վոչ վոքի չեմ կարող վստահել ջուրը: Գնացեք, միացեք շարքերին:

Ագուավի հին մարտական ընկերները մտիկ տվին նրան պիտոր աչքերով և մեքենաբար կատարեցին հրամանը:

— Մահումա, քշիր ուղտերին, — ասաց Ագուավը և շուրջը նայեց: Նա տեսավ, վոր ձիյերը քարավանի յետերից գնում եյին ջրի հույսով:

Կեսորվան մոտ եր, յերբ Մահուման սկսեց հրամանատարին ինչ-վոր բացատրել: Յերկուսն ել դանդաղ զրուցում եյին, հազիվ լեզուները շարժելով և դժվարությամբ եյին հասկանում իրար: Անցավ ալելի քան մի ըոպե, առաջ քան նրանք իրար կհասկանային: Զունախիդ խանի հետքերը մի կողմ եյին թեքվում: Մահուման շրջեց ուղտերին և գնաց այդ հետքերով:

Այլանդակ և քանդուված ավաղաթմբերը ամեն ըոպե սպառնում եյին նրանց տակովս անել: Ձիյերը մեկը մյուսի յետերից վեր եյին սողում գալարուն ավազաթմբերով: Շարքերը կտրտվեցին և հեծյալները սկսեցին ամբոխով առաջանալ: Ձիյերը ներքեկց տոթում խացվում եյին, կարծես նրանց սմբակները փորփորում եյին շիկացած ածուխները: Յետ շրջվելով, ձիյերը առաջանում եյին հոսող ավաղով:

Կեղտոտ, գետնի գույնով, քրտնքի սև շերտերով, նրանք նորից շրջվեցին դեպի վերելք, հույս ունենալով ավելի կայուն շերտի կառչելու:

Յերկու ուղտերը ընդհանուր պարանից կտրվեցին և ակսեցին յետ մնալ: Ներքենում սպիտակ ճաղատի պիս փայլում եր ամրապինդ հողը: Այդ տեղերից վերջին փոթորիկը ավաղաբլրեր եր քշել:

Ուղտերը արագ ցած իջան և վազեցին ներքեւ,  
բարխաններով: \* Նրանց գրավում եր հետո ճանապարհը:  
Մահոման գոռաց և թները թափ տվեց, բայց արդեն  
ուշ եր: Ավազը հոսեց: Ուղտերը վզերը ձգեցին և վաղ  
տվին քամու արագությամբ: Բայց նրանք վոտ դրին  
ավազաբլրին և դա բավական եր: Ավազի ամբողջ զանգ-  
վածները շարժման մեջ մտան: Պոռթկաց վայրենի և  
թախծու մի մոռւնչ: Խուլ և սպառնագին՝ թնդում եյին  
բարխանները: Սև քուլաններով, ամափ ահագին պայ-  
թյունի նման, վողջ ձորը վորոտաց: Ավազաթմբի գա-  
գաթը գլորվեց և իր տակը թաղեց յերկու ուղտերին:

— Այդ ուղտերի վրա ջուր չկմը, — խոպոտ հարց-  
րեց Ագռավը, հանցավորի նման շուրջը նայելով:

— Հրամանատար, դրանք ջրով բարձված վերջին  
ուղտերն եյին, — տխուր շշնջաց յոմուղը:

Ագռավը վոչինչ չպատասխանեց և ընդհանուր շար-  
ժումը շարունակվեց: Կես որից հետո ծարավի տան-  
ջանքները անտանելի դարձան: Բոլորի քթափողերը  
չորացել եյին: Կուլ տալու գործողությունները անտա-  
նելի ցավեր եյին պատճառում: Ուռած լեզվից արյուն  
եր յելնում և դիպչելով լնդերին, ասես թե կաշի յեր  
քերթում: Մարդիկ ափով փակում եյին քիթը, հուսա-  
լով վերջին խոնավության վողորմելի մնացորդը թո-  
քերում պահել: Բայց չոր փոշոտ ողը չորացած կոկոր-  
դից ներս եր խուժում և կիզում եր վողջ կուրծքը:

\* Բարխաններ, — ավազե թմբեր են, վորոնք առաջանում  
են քամուց:

Արշավանքի սկզբում ձիավորները փոշուց սրբում  
եյին աչքերը: Հետո սկսեց արցունքահոսություն: Այժմ  
փոշին կուտակվել եր կոպերի ծայրերին, բայց աչքերը  
չոր եյին: Հողի հատիկները կոպերից ցած եյին ընկ-  
նում և գրեթե կուրացնում եյին մարդկանց, ստի-  
պելով նրանց տնքալ ցավից: Երթունքները մինչև  
արյան յերակները՝ ճեղքվել եյին: Մարդիկ ձայները  
կորցրել եյին և շշուկով եյին խոսում:

Յերբ վոեև մեկը անմեղ կերպով շատ եր մոտե-  
նում ուղտերին՝ Ագռավը, վորն արդեն իրեն նման  
չեր, արյունով լցված կլոր աչքերով՝ կատաղած  
խոռում եր և մահվամբ սպառնում: Հանցավորը իս-  
կույն և յեթ թագնվում եր նրա հայացքից: Յերբ իջավ  
արեց և մի կարճ ժամանակ գորշ ավազները ծիրա-  
նագույն դարձան և ձորերում մուգ կապտավուն  
ստվերներն ընկան, հեծյալների ամբոխը կանգնեց:

Նորից վրա հասավ սառնամանիքային գիշերը: Բար-  
խանի զառիվայրին պառկել եյին մարդիկ և կենդա-  
նիներ ու հոնդում եյին: Հետո յեղյամը իջավ և դրա  
յետեից ել բարձրացավ անողոք, շեռացող արեց և  
նորից սկսվեց որը:

## ՍՊԻՏԱԿ ՓԱԼԱՍ

Յեթե Զունափու խանը հեռու գնացած լիներ, մար-  
դիկ հենց այդպես ել կմնային ավազին պառկած: Բայց  
արդեն առավոտվանից յերեացին յետ մնացած, հազիվ

առաջացող ձիավորներ, Նրանց վրա կրակեցին, Յերբ  
մոտեցան՝ տեսան յերկու դիակներ հրկիված յերես-  
ներով, յեփված շրթունքներով։ Պարզ եր, վոր խանի  
վիճակն ևս շատ լավ չեր։

— Մատ եւ Ապա։

Այս խոռքերը ջոկատին քաշ տվին առաջ բար-  
խաններով, ինչպես թոկե ողակը քաշ կտար կիսա-  
խեղդ մարդուն։ Ագռավը առաջվա պես չեր թողնում  
վոչ վոքի մոտենալ ուղտերին։ Նրան թվում եր վոր  
2 կամ Յդղումներում դեռ ջուր մնացած կլինի, բայց  
նա չկարողացավ դրանում համոզվել։ Դիշերը, յերբ  
նա յենթադրում եր թե բոլորը քնած են, կամացուկ  
մոտեցավ քարավանին։ Նա մտածում եր, վոր դեռ  
կարելի կլինի մարդկանց մի ջրամանի չափ ջուր տար։  
Բայց բոլոր կողմերից բարձրացան վողորմելի կերպա-  
րանքներ և ձգվեցին իրա յետելից։

Ագռավը հաստատակամությունը կորցրեց, Նա  
ընկավ ավագին և հեկեկաց, Զիյերի սանձերը ձեռքերին  
որորվող ստվերներն իսկույն կանգնեցին։ Ագռավը պա-  
տրաստ եր մինչև իր արյան վերջին կաթիլը տալ նրանց,  
բայց իր սուտը խոստովանել նա անկարող եր, Նա  
հասկանում եր, վոր մարդիկ կկործանվեն, յեթե իմա-  
նան, վոր ջուր չկա։ Դրա համար ել նա մնաց ավագին  
մինչև առավոտ։

Լուսադեմին Ագռավը վեր կացավ և հրամայեց  
դրւրս գալ։ Զիյերը տանում եյին իրենց հետ մեռած  
մարդկանց և տագնապով հետեւում եյին դղում-

ներով բարձած ուղտերին, ասես վախենալով կորցնել  
նրանց։

Արել դեռ զենիթին չեր հասել, յերբ Ագռավը  
տեսավ, վոր կողքից մոտենում են յերեք ձիյեր առանց  
հեծվորների։ Նա հասկացավ, վոր խանի ջոկատից  
ուժասպառ մարդիկ ընկել են թամբերից։ Նրանք պետք  
ե վոր ընկածլինելին այնտեղ, մոտերքում, բայց նրանց  
վոչնչով չեր կարելի ոգնել։ Դրա համար ել Ագռավը  
հրամայեց բոնել ձիյերին։ Ամենից շատ նա վախե-  
նում եր ջոկատը կանգնեցնել, քանի վոր վստահ չեր, թե  
դրանից հետո հնար կլինի ստիպել նրան առաջ գնալու։

Կարճ ժամանակից հետո Մահոման յերկու ձիյեր  
ել բոնեց։ Հետո ինչ-վոր մատիկ տեղից լսվեց մի կրա-  
կոց և ելի մի ձի առանց հեծյալի մոտեցավ ուղտերին։  
Վոչ-վոք ուշադրություն չեր դարձնում անհետացող  
մարդկանց վրա։ Զիավորները ձգվել եյին իրար յետե-  
վից և յերբ մի մասը ավագարլրերով բարձրանում եր  
արդեն, մյուսները դեռ ձորումն եյին։ Յերբ քարա-  
վանը ավագարլրի յետեւում կորավ, բոլորը կանգ առանց  
բայց հենց վոր հսկայական ուղտերը դեղին դղումնե-  
րով նորից յերեացին, շարժումը վերսկսվեց։ Ագռավը  
տեսնում եր, վոր մոտակա ժամերին արդեն նրա խա-  
բերայությունը յերեան կգա։ Բայց հիմա նա ուրիշ  
բանի մասին եր մտածում։ Մահոման, ասես գուշա-  
կելով նրա գաղտնի միաքը, խռպոտ ձայնով ասաց։

— Մարդիկ մեռնում են, ձիյերը ընկնում։ Յերբ  
դա սկսվում ե՝ միանգամից բոլորին բոնում ե։ Յես

հենց հիմա մի կանչ լսեցի այն կողմից։ Բայց ի՞նչ կարող եմ յես անել։ Յերեխ նրա ձին ընկավ ու նա մաս ավագին։ Յես թույլ եմ։ Յեթե յես զնամ այն կողմը; ել չեմ վերադառնա։ Յեթե յես թամբից իջնեմ ցած՝ գուցե ել չկարողանամ նորից նստել։ Դու կը կոց լսեցիր։ Ի՞նչ-վոր մեկը խփեց իրեն։

Մահոման յերկար այսպես շշնջում եր, ասես թե արդարանալով՝ թեպետ նրան վոչ-վոք չեր մեղադրում։

Շուտով Ազուավը տեսավ, վոր յոմուղը արդարացի յեր։ Արել հազիվ եր հակվել զենիթից՝ յերբ



առաջին ուղարք ընկավ։ Ամբողջ քարավանը դդումի ջրանոթներով՝ կանգ առավ։ Բարձրավիզ կենդանիները շարժում եյին բոլոր կողմերը իրենց սիրապանձ գլուխները և նայում եյին մարդկանց տրտում և խոնավ աչքերով։

Ընկած ուղարք ջղաձգության մեջ եր։ Նրա յերկար, դեղին վոտները, ծնկների ճաղատի կնճիռներով և անձե, կակուղ ներբաններով, ցնցվում եյին, քանդելով ավազը։

Զիավորները արագացրին իրենց ընթացքը, ասես առիթից ոզտվելով՝ հասնել քարավանին։ Ազուավը ցած թռավ ձիուց և հապճեալ կարեց պարանը։ Մահոման սարսափից գորշացած դեմքով քարավանը առաջ տարավ։

— Արյունը կարելի կլիներ խմել, — դողդոջուն ձայնով ասաց մեկը։

Ազուավը իրեն չլսելու դրեց և շարժվեց առաջ։ Յետ նայելով՝ նա տեսավ կարմրատակած, փոշով ծածկված և ատելությունից աղավաղված մի գեմք՝ բորբռք աչքերով։ Ազուավը հասկացավ, վոր նրա կոնակը ծարավից խենթացած մարդուն գայթակղեցնում ե և այդ պատճառով անցավ քարավանի առաջ։ Նա զգաց վոր հիմա նա անկարող ե հնազանդեցնել, զսպել այդ մարդկանց և վորոշեց առ ժամանակ չերեալ նրանց աչքին։ Ամեն ըովե նա վախենում եր, վոր մարդիկ կարող են հարձակվել դգումե ջրանոթների վրա։

Մահոման դեղերում եր ձիու վրա ավազաբլներով և ջրհոր եր վինտրում։ Կյանքի՝ վերջին ցասկոտ բռնկումը ուղեցույցի չոր, կարծես յերկաթե մարմնում՝ մղում եր նրան ջուր վորոնելու։ Այստեղ պիտի բերդի ավերակներ լինեյին, բայց Մահոման վոչինչ չեր գտնում։ Այդ վայրը միանդամայն անճանաչելի յեր դարձել, վորովհետև վերջին շաբաթը յերկու փոթորիկ եր անցել այդ տեղով։ Ավազաբլի փեշերը վոչ թե դեպի հյուսիս եյին գնում՝ ինչպես առաջ, այլ արևելք։ Բայց Մահոմայի հոտառությունը նրան կար-

ծես ասաց, վոր ջրհորը այստեղ պիտի լինի։ Նա մոռտեցավ Ագուավին և պարզեց չոր և կասկարայի պես ու ափն ու մատը սկսեց շարժել նրա վրա։

— Այստեղ վոչխարներ շատ կան, — նա լոեց, խոսքեր փնտրելով։ Նա չեր կարողանում «ոռազիս» կամ «կիշլակ» ասել, — և անոդնական կերպով կը կնում եր։

— Մեծ տեղ եւ Ամբողջ շրջապատը կոչվում ե Կըրխ-Քուլաչ («Քառասուն սաժեն»)։ Ջրհորը յերթեք չի ցամացում, ենքան շատ ե ջուրը։ Իսկ ենտեղը Ոտուղ քուլաչ ե կոչվում («Յերեսուն սաժեն»)։ Հորում շատ ջուր չկա, բայց խուրունկ չի։

— Եստեղ Բալ-Կուդուկն ե («Մեղրահոր»)։ Նրանում բոլորովին աղ չկա։

— Գնա խանի յետեկից, հետքը մի կորցնի։

— Ուղտերը գնում են խանի յետեկից։ Նրանք ջրի հոտն առնում են։ Խանը մոտիկ ե։

Մահոման խլեց Ագուավի ձեռքը։ Յոմուգը աչքերը սեեռեց մի կետի։ Հետևելով նրա հայացքին՝ հրամանատարը տեսակ ավազին ընկած սպիտակ փալաս։

— Եստեղ ջուր կա, — հանդիսավոր կերպով ասաց ուղեցույցը։ Փոթորկի ժամանակ ավազաբլուրը իջել ե ջրհորին։ Դրանից ջրհորի բերանը ծածկվել ե, բայց եղ վոչինչ, վորովհետեւ նա տախտակներով ծածկված է։ Ինքդ հո տեսնում ես փալասը։ Քիչ բան կա փորելու. չորս հինգ սաժեն։ Ջուր ինչքան ասե՞ կա։

Մահոման ծիծաղեց ուրախությունից։ Ուղար կանգնեցին, իսկ առաջապահ ուղար փալասը հոտոտելով

փոշտաց։ Զիավորները մոտեցան և վողջ բազմությամբ շրջապատեցին հրամանատարին և ուղեցույցին։

Ցերեում եր, վոր նրանցից շատերը չգիտեն — գնում են, թե կանգնած են տեղում։ Բոլորը ապշեցուցիչ կերպով նման եյին իրար, իրենց կապտավուն յերեսներով, կապույտ, ուռած շուրթերով և գորշ, ավազի նմանող զգեստներով։ Նրանք կորցրել եյին ինքնապահպահնման ամեն մի զգացում, Նրանք լոին, վողջ բազմությամբ կարող եյին կանգնած մնալ մի տեղում, մինչև վոր մեկը մյուսի յետեկից սկսեյին ցած ընկնել։

Այդ մարդիկ անկարող եյին նույն իսկ մի փոքրիկ փոս փորել։ Բայց յեթե նրանք իմանան, վոր այստեղ ջուր կա, — նրանք տեղից չեն շարժվի և կորչեն։

Մահոմայի դեմքին վայրի, մեռելային յերկյուղ յերեաց։ Նրան մոտիկ, հենց նրա վոտների տակ, կենականարար ջուր կար։ Բայց պետք եր թողնել այն և գնալ դեպի շիկացած ավազները, Մոտակա հեծյալը շարժեց ծնոտները և նրա ատամների տակ ավազը բարձր ճռաց։ Հրամանատարի հայացքին հնազանդվելով՝ Մահոման առաջ շարժվեց։ Հեծյալների բազմությունը ձգվեց նրա յետեկից։ Տեղական ձիյերը կանգնում եյին, հոտոտում փալասը և փոշտում։ Նրանք սմբակներով փորում եյին, բայց կարմիրբանակայինները չգիտեյին, թե ինչումն ե բանը և քշում եյին նրանց առաջ։ Մահոման իր ձին մոտեցրեց հրամանատարին և ասաց, մտիկ տալով շուրջը, վոր վոչ վոք չլսի։

— Ծարավ, ծարավ, — շնչում եր նա: — Շուտով  
մեր ժամը կհասնի՞ և մենք կտեսնենք նրա դեմքը: Նա  
չոր ե, ինչպես կարակումի ավազուտը: Ծարավի աշ-  
քերը կածկում են ատելության փայլով, ինչպես  
այս արել: Չոր լեզվով նա միշտ լիզում ե կապույտ  
շուրթերը: Նա կնայի մեզնից յուրաքանչյուրի աշ-  
քերին և մենք կսկսենք իրար ատել: Ու մենք կսկսենք  
իրար սպանել: Հրամանատար, մեր կշեռքի նժարը  
շատ բարձրացավ: Մենք կործանված ենք:

Եսկադրոնի հրամանատարը լուռ եր: Նա մոռա-  
ցության մեջ եր: Վաշտը իրենից մի զարմանալի  
տեսարան եր ներկայացնում: Առջեից որոշվելով,  
ասես զարկված, — Աղուավն եր գնում: Քիչ յետեն  
Մահոման եր: Հետո ձգվում եր բարձր ուղտերի քա-  
րավանը: Նրանք գնում եյին անկանոն, թոկը քաշքա-  
լով և իրար դնչերը քիչ եր մնում կտրտեյին: Հենց վոր  
թոկը մի տեղ մի քիչ թուլանում եր, ուղտը ընկնում  
եր ծնկներին, վորպեսզի գոնե մի վայրէյան իրեն հան-  
գիստ տա: Բայց մյուս ակնթարթին արդեն թոկը  
քաշում եր նրա դնչից և նա լոխն վեր եր կենում և  
գնում: Խելացի կենդանիները չեյին վորոճում, այլ բե-  
րանի խոնավությունը խնայում եյին թոքերի համար:  
Այդ ընդհատվող, շուտ-շուտ կանգ առնող և տագ-  
նապով լի թափորի յետերից գնում եյին ջրի հույսով  
ապրող հեծյալները:

Առաջ, առաջ:

Եսկադրոնի հրամանատարը շարունակում եր ուղին  
և տանում եր յետերից մեռնող մարդկանց և կեն-  
դանիներին:

### ԲԱԼ - ԿՈՒԴՈՒԿ

Մահոման վիթխարի ավագաբլրի գագաթին կանգ-  
նեցրեց ձիուն և ձեռքերը առաջ պարզեց: Այրվող  
յերկնքի փոնի վրա նա ձիու հետ միասին ամբողջապես  
նմանում եր սև հուշաբձանի: Անսպասելի կերպով նա  
թամբից ցած նետից և սկսեց պար գալ դերվիշի  
նման և առանց ձայնին ափսոսալու գոռալ:

— Բալ-կուդուկ, Բալ-կուդուկ (*(«Մեղրի Ջրհոր»)*):

Հեծյալները շատապեցին և սկսեցին հավաքել իրենց  
ուժերը: Դա նրանց վերջին ճիգերն եյին: Մի քանիսը  
վոտքով եյին գնում, քաշելով ձիյերին իրենց յետերից:  
Յերկուսը մնացին ավագին պառկած՝ ովնության սպա-  
սելով: Ջրհորի շուրջը, այդ փոսի մեջ աճել եյին մո-  
շենութիւնը: Մի քանի հարյուր գլուխ վոչխարների հոտը  
տեղավորվել եր Ջրհորի շուրջը, — ավագին: Հենց Ջրհորի  
մոտ նստել եյին յոմուգները: Նրանք ջուր առնելու  
համար ուղտեր չունեյին և դրա համար ել նստած  
*(«Մեղրի Ջրհոր»)* մոտ նրանք մեռնելու եյին:

— Սրանք Ջունաիդի չոքաններն են, — գոռաց Մա-  
հոման:

— Լծեցեք ուղտերին, — խռպոտ ձայնով ասաց Աղ-  
ուակը: Հովհանները չշարժվեցին:

— ԻԵ, ՎԵՐ, — ՀՅՈՒԿՈՎ ասաց մի կարմիրբանակային, դիմելով հովիվներից մեկին:

Նա մի քանի քայլ անելու անգամ ուժ չուներ: Նրա ընկերը անշարժ ընկել եր նրա վոտների մոտ, ավազին: Հովիվները շարունակում եին լոին նստել իրենց տեղերում: Այն ժամանակ Ագռավը մեծագույն մի ճիգով վոտները դուրս հանեց ասպանդակից: Նա ուղեց թամբից վար թռչել, բայց ընկալ և փովեց ավազին: Բարձրանալով, նա դանդաղ առաջացավ, ասես թե քայլերով չափելով: Ճիշտ այդպես ել, չափած, առանց շարժումները արագացնելու նա բարձրացրեց ատրաճանակը և իրար յետեից յերկու անգամ կրակեց: Նստողներից մեկը յերեսով խփեց ավազին, իսկ մասցածները նետվեցին դեպի ջրհորը:

Չորանները շտապով լծեցին յերկու ուղտերի, ապա հովիվներից մեկին թոկով կապելով ընթատակերից, ցած իջեցրին այդ սև յերախը: Ինչ-վոր տեղից, հողի տակից մի աղաղակ հնչեց: Ցերկու չորանները մի կողմ քշեցին լծափոկերով կապված ուղտերին: Թաց, մազե թոկը վշշաց ավազի վրա: Հետո նա ձգվեց և նրանից ավազի վրա թափթփվեցին արծաթյակաթիները: Ցերկու յոմուղները մոտ վագեցին և մեծ ճիգով խոնարհեցին ինչ-վոր բանին: Հետո նրանք ուղղվեցին և ջրհորից դուրս քաշեցին մի կնոջ այլանդակված և ուռած դիակը:

— Ասա թող մաքրեն ջրհորը, թե չե բոլորին ել կխփեմ, — խռպոտ ասաց Ագռավը:

Նա նստել եր ավազի վրա և նայում եր ջրհորին: Նա չգիտեր, թե ինչքան մարդ հասավ Բալ-Կուղուկի մոտ: Դուցե կեսը: Բայց նրանց, վորոնք հիմա մեռնում ելին այստեղ մոտիկ, կարելի յեր դեռ փրկել այս ջրհորի ջրով:

Մի քանի անգամ չորանները հերթով ջրհորն իջան: Ուղտերը միալար քայլում ելին ավազի վրայով: Յոմուգները դուրս բերին մի ինչ վոր լեշ և մի քանի թաղիքի կտորներ: Հետո նրանցից մեկը մոտեցավ Ագռավին և նրան մատուցեց մի գավաթ դեղին դիակնահոտ ջուր, վորում բրդի կտորներ ելին լողում: Ագռավը այլայլվեց և գավաթը տարավ բերնին: Բայց գարշանքի դգացումը անցավ նրա ամբողջ եյությամբ և խեղդեց կոկորդը: Կարմիրբանակայինը մոտեցավ և պարզեց ձեռքը:

— Զիմես, — ասաց Ագռավը. բայց տեսնելով նրա աղերսալից հայացքը, նա չկարողացավ թափել նեխված հեղանյութը:

Զիափորը, գարշանքից խեղդվելով, խլեց գավաթը և թափով խմեց ամբողջը: Հենց նույն ըոպեյին նրա մեջ մի այնպիսի սրտիսառնուկ սկսվեց, վոր իսկույն ընկալվ:

Մի քանիսներն ել մոտեցան ջրհորին: Մահուման վերցրեց վեղը և թափեց այն նրանցից մեկի զլիին: Մարդը վոչ այն ե ձչում եր, վոչ այն ե լալիս՝ և աշխատում եր ասես ջրի կաթիները բռնել: Բայց բարենպաստ զովության հետ մեկան, դիակի գարշան-

տությունը բռնեց նրան ամպի պես։ Նա ընկավ շիկացած ավագին և յերեսը ձեռներով ծածկեց։

— Հրամանատար, — ասաց Մահոման, — հետո մեզ համար ավելի վատ կլինի։ Բայց առաժմ, յերկու-յերեք ժամով մենք ուժեղ մարդիկ կլինենք։ Մեր ձի-յերը կուժեղանան և մենք գուցե հասնենք խանին։

— Ճիշտ ե, — շաղ տուր բոլորի վրա, շաղ տուր, — ասես թե կոկոռում եր Ազոավը։

Մոտիկ ավազաբլին ընկել եյին մարդիկ և ձիյեր։ Նրանց վրա ջուր ցանեցին և նրանք որորվելով վեր կացան և մոտեցան ջրհորին։

Այսպես բավական յերկար շարունակվեց։ Մարդիկ թեթևություն զգացին, թեպետ զգեստի յուրաքանչյուր ծալքը անտանելի կերպով գարշահոտություն եր բուրում։ Հետո ջրհորի մոտ հավաքված մարդիկ շատացան և սկսեցին իրար վրա նորից և նորից ջուր շաղ տալ։

Ջրույց սկսվեց և Ազոավը նկատեց, վոր մարդիկ նորից ձայնի ընդունակ են դառնում։ Հետո տեսավ, եսկարդոնը շարքի յե կանդնում, Պակասում եր ութը հոգի։

## ԾԱՐԱՎԻ ԴԵՄՔԸ

Իրար թրջելուց առաջացած ժամանակավոր թեթևացումը շատ շուտով անցավ։ Բայց մոտ յերեք ժամ վաշտը արագ առաջ եր շարժվում։

Հետո ընթացքը դարձավ դանդաղ և ծանր։ Հինգ կիոմետր ել անցնելուց հետո մեջտեղի ուղար ծանրութեն ընկավ ծնկներին, ապա գլորվեց կողքի վրա։ Ազոավը հուսահատությամբ տեսավ, վոր կողքի դդումները լի եյին ջրով։

— Տրորեց, տրորեց։

Ավազը ծխաց։ Հեծյաները նետվեցին դեպի ուղար։

— Զուր տուր, ջուր, — ընկած և խոպոտ ձայնով ասում եյին նրանք խելահեղված։ Մարդիկ խուսա-



փում եյին հրամանատարին նայել և ուղեցույցից եյին ջուր պահանջում։

— Տուր գոնե բերաններս թրջենք, — սպառնալից կերպով տնքաց մեկը, ձիով ընդհուպ մոտենալով Մահոմային։

— Զուր չկա, — կարճ պատասխանեց Մահոման։ Նույն այդ բոպեյին նրա գլխի վրա փայլատակեց թուրը, բայց հարված չհետևեց։ Ազոավը ծուլորեն առաջ եր նայում, ասես սպասելով թե յերբ կվերջանալ էղվակոիվը։

— Ինչպես թե չկա, — իսկ ուղտերի վրա, — հարցը մյուսը՝ կասկածով նայելով ընկերներին:

— Ցամաքեց: Յերկու որ ե ինչ ցամաքել ե, — սրտնեղությամբ փնփնթաց Մահոման:

— Իսկ ինչու չեյիր ասում, — զայրացած հարցնում եր մի խուլ ձայն ընկերների կոնսակի յետեից:

— Չասացի, վոր կարողանայիր ելի առաջ գնալ, չիմի կենդանի յև: Թե վոր ասել եյի՝ արդեն յերեկվանից մեռած կլինեյիր:

— Խմել են. սուտ ե ասում, — մըթմըթոցով կրկնեցին բոլոր հեծյալները,

— Ո՞վ խմեց:

Մարդիկ ձեռքերը տարան դեպի գենքերը:

Ամեն մեկը նայում եր մյուսին, աշխատելով հիշել, թե ով եր առաջից գնում:

Ագուավը սառնասիրու նայում եր ավաղին ձիու ականջների արանքով:

Մի բոպեյի լոռությունը բավական եր, վորպեսզի ծարավից մեռնող մարդիկ մոռանային վիճաբանության տուարկան: Շիկացած փոշոտ քողը բոլորի դիտակցությունը մթագնեց, Բոլորը լցված եյին իրար հանդեպ խորին ատելությամբ, բայց թշնամության պատճառը վոչ-վոք չեր հիշում: Հնազանդվելով մի ինչ-վոր սովորության, վոր իրենցից ել ուժեղ եր, — բոլորը լոռությամբ դարձրին ձիյերի զլուխները և ցըսքին դանազան կողմերը, վորպեսզի չսկսեն իրար կոտորել:

Մահոման ինքն ել չիմանալով թե ինչու, վերցրեց թոկը և առաջ տարավ այլս բանի պետք չեկող ձիյերին: Ագուավը շարժվեց նրա հետքով, Մի քանի ձիավորներ կանգ առան: Ձիյերը հակեցին իրենց գլուխները զրեթե մինչև գետին և տեղերում կանգնած յերկար որորվեցին: Յերբեմն հեծյալները, կամենալով հանգիստ տալ ձիյերին՝ իջնում եյին ցած: Մի քանի քայլ անելով՝ նրանք ընկնում եյին և նորից գնում, ձիու սանձից քաշ գալով: Յերկու-յերեք մարդ վոտքով յերկար քաշ յեկան, վորովհետեւ ուժ չունեյին թամբին յերնելու: Հետո նրանք յետ մնացին և այլս նրանց չեր կարելի տեսնել: Ձիյերը առանց հեծվորների համառօրեն առաջ եյին գնում մի ուղղությամբ մյուսների հետ: Մի քանի բոպեյից մի քանի ուղտեր նըստեցին ավաղին և Մահոման թոկը շպրտեց: Ձիյերը, վորոնք սովոր եյին դգումների յետեկո գնալ, կանգ առան:

Թվում եր թե այստեղ արդեն վերջանում է վաշտի ուղին և մարդիկ կենդանիների հետ միասին իրենց տառապանքներին վերջ կտան այստեղ, այս ավաղներում:

Բայց հեռու, բարձր ավաղաբլիքի վրա նորից յերեւաց Ագուավի գլխահակ կերպարանքը և շարժումը նորից ծայր առավ: Առողջ ուղտերը առաջ եյին ձգվում վաշտին հասնելու, բայց թոկերը չեյին թողնում: Խղճալի և միաժամանակ դաժան վոռնոցը, սկսած կզմզոցից և վերջացրած իոր հոնղացող բա-

սով, յերկար ժամանակ ուղեկցում եր հեռացող  
մարդկանց:

Հանկարծ Ագռավը ձիյուն կանգնեցրեց: Ուղիղ նրա  
առաջ ծփում եր հսկայական ջրային մի տարածու-  
թյուն: Կապույտ անտառը կանգնած եր ատամնավոր  
մի պատի պես: Ջրերը խայտում եյին իրենց համաշափ  
պողպատյա ալիքներով: Ագռավը ձիյու զլուխը յետ  
շրջեց, վորպեսզի հեծյալներին կանգնեցնի: Հիմա նա  
հասկանում եր, վոր վաշտի բոպեները հաշված են:  
Ջրի ուրվականը մարդկանց կտտիպի ձիյերին մեռցնելու  
չափ քշել, միրաժին\* հասնելու համար և ապա  
ամբոխի մեջ հուսահատություն առաջ կբերի, և այն  
ժամանակ վոչ-վոք չի կամենա վոչ մի քայլ անել:  
Ագռավը հաճախ եր լսել Մահոմայից լեզենդ այն  
մասին, վոր յերբեմն Դարյան հոսում ե ավազներով և  
մարդիկ, տեսնելով այդ, մնում են և մեռնում հենց  
տեղն ու տեղը: Ագռավը վորոշեց ամենքին ցածում  
պահել, թեկուղ ինչ վոր ել լինի: Մի բոպենա ափսո-  
սաց, վոր Մահոման առաջ եր ընկել, բայց նրան  
վերադարձնել այլևս ուշ կլիներ, Մոտակա հեծյալը

\* Միրաժ կամ Փատամորգանա մի յերսույթ ե,  
վորը հանդիպում ե տաք յերկրներում, և կայանում ե նրա-  
նում, վոր առանձին առարկաները, վորոնց տեսնել չի կա-  
րելի, հանկարծ տեսանելի յին դառնում, վորովհետև նրանք  
արտացոլում են ողի վերին շերտերում: Նրանց մոտենալու  
հետ մեկտեր, նրանք սկսում են հողից կտրվել և կախվել  
ողում, ապա անհետանալ ողի վորոց շերտերի փոփոխու-  
թյան հետ: Միրաժը զուտ ողերկութաբանական տեսիլք ե:

զրեթե բարձունքին հասավ: Նրա արյունալի, անմեղ  
աչքերը, ինչ - վոր մի առանձին տեսակի խելացիու-  
թյամբ եյին նայում հրամանատարի վրա: Մթնաժեռ  
դեմքը, վորը խիտ ավագով եր պատաժ, — անշարժ եր:  
— Լոյիր, — սպառնալից հրամայեց Ագռավը:

Անմարդկային ատելությունը աղավաղեց ձիավորի  
կարմրատակված դեմքը: Նա դիտեց միրաժը, հանդիսա-  
վոր կերպով նայեց Ագռավին, նայեց ցածը — մնացած-  
ներին և ձեռքով արավ նրանց: Ագռավը բռնեց նրա  
կոկորդից: «Զհուր» աղաղակը տարածվեց վողջ ստորո-  
տում:

Գորշ փոշին ավազարլի ստորոտում պալան-պալան  
բարձրացավ: Մեկ այստեղ, մեկ այնտեղ, ձիավորները  
սուզվում եյին: Խելահեղ հուզմունքով բռնված, նրանք  
քշում եյին ձիյերին դեպի ջուրը: Նրանք ուզում եյին  
գոռալ իրարու գետի մասին, վոր նրանց աչքի առաջն  
եր. նրանք իրար ջուրն եյին ցույց տալիս մատներով,  
բայց վոչ-վոք չեր կարող վոչ մի խոսք արտասանել:

Այդ բոպեյին բոլորը տեսան, թե ինչպես Մահո-  
ման առջևում ձիու հետ դանդաղ խուրասուզվեց ջրում  
և անհետացավ: Նույն այդ բոպեյին ջուրն ու անտառը  
սկսեցին դանդաղ կերպով հալչել յերկնքում: Սրտա-  
շարժ և խելահեղ ձիչերը ուղեկցում եյին լուծվող մի-  
րաժին: Նրանք հիմա իրար մոտ եյին: Նրանց ատե-  
լությունը հիմա արդեն հեշտությամբ բռնկվեց՝ ինչ-  
պես կրակին մոտեցրած վառող: Ագռավը լսեց մի  
կրակոց, հետո մի ուրիշը, յերրորդը և տեսավ, թե

ինչպես յերկու հոգի ընկան ավազին։ Ագռավը թեք-վեց մի կողմ, ձին քշեց դեպի վիթխարի ավազաբլուրը։ Դա անմտություն եր, բայց ինքն ել չգիտեր, թե ինչ ե անում։ Նա ուզում եր չլսել այդ կրակոցները։ Նա իրեն եր ամեն ինչում մեղավոր համարում։ — Յեվ ջրի կորստում, և ծփափորների ինքնասպանության ու խելահեղ, սոսկալի այն կրակոցների համար, վոր թնդում եյին ներքեռում, նրա յետեւ։ Մեկ ել հանկարծ ձին մի անսպասելի ուժով թռավ ավազաբլրի գագաթին և կանգ առավ։

Ցածում, հսկայական հովտում Ագռավը տեսալ Զունաիդ խանի վրանախումբը։

### ՄԵԿԸ ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ

Տասնյակ յուրտեր կանդնած եյին իրար կողքին։ Բանակատեղու մեջտեղում պառկել եյին ուղտերը, Աշքերով՝ նա վորոշեց, վոր այնտեղ մոտ յերկու հարյուր ուղտեր կլինեյին։ Վրանախմբից յուրս՝ ավազի վրա վլստում եր հսկայական ամրություն ։ Նույնիսկ այստեղից յերկում եյին վառ զգեստներ։ Ագռավը հասկացավ, վոր զրանք խանի գերիներն եյին և յերկար չմտածեց։

— Զո՛ւր, ջնոր, Զունաիդ խանը, — գոռաց նա խելագարվածի պես։

Դա հրաշք եր, բայց նրա ձայնը վերականգնվեց, Նորքեռում կրակոցները մի ակնթարթում դադարեցին, բայց վոչ-վոք տեղից չշարժվեց։

Հրամանատարը գունաթափ ժպտաց և ուսից ցածքերեց կարաքինը։ Նա հասկացավ՝ վոր նրան չհավատացին։ Հուսահատությունից տանջված, նա տեսավ, վոր ուղտերի մեջ իրարանցնում սկսվեց։ Այնտեղ մարդիկ եյին վաղվզում և ուղտերը վոտքի եյին կանգնում։

Զունաիթ խանը կրակոցները լսել եր և վորոշեց հեռանալ։ Յերկում եր, թե ինչպես ավազի վրայի մեծ բիծը, վորը գոյացել եր վառ զգեստներից, շարժվեց և ձգվեց զանազան կողմերը։ Գերիները սկսեցին փախչել։ Հեծյալները հետապնդում եյին նրանց և Ագռավը լսեց կրակոցի ձայներ։ Նրա աչքերի առաջ ծեծկրտում եյին բնակիչներին, վորոնց փրկության համար ինքը և իր կարմիրբանակայինները իրենց կյանքն եյին տալիս։

Լավ չհասկանալով, թե ինչ ե անում, Ագռավը սկսեց կրակել բանակատեղու վրա։ Նա նշան առավ մեջտեղի մեծ և սպիտակ յուրալը, Դրան վորպես պատասխան, յուրաից կրակոցներ ճայթեցին և գնդակներ արագորեն սուլեցին Ագռավի մոտով։ Նա յետ մտիկ տվից դեպի իրենց կողմը։ Ագազի ծխի նման դորշ բռնկում-ները ցույց եյին տալիս, վոր գնդակներն ընկնում են հեծելազորից վոչ հեռու։

Զունաիդ խանի բանակատեղուց մոտ յերկու տասնյակ հեծվորներ ուղղվեցին դեպի նա։

Ագռավը տեսավ, վոր մոտեցավ վճռական բոսկեն, և տմեն ինչ նրանից ե կախված։ Նա, ով առաջինը

կտիրապետի ավազաբլրի գագաթին, կկարողանա անպատիժ կերպով վերից վար կրակել թշնամու վրա:

Խանի թիկնապահները ձորակով թռչում եյին քամու պես: Ագուավը շուրջը նայեց, Զիավոր և հետեակ հեծելազորայինները շտապում եյին դեպի նա, խրվելով ավազում, Նրանք մազլցում եյին, վազում, ընկնում, սահում, զլորվում եյին յետ և նորից նետվում դեպի դիք վերելքը: Զիավորները գրեթե հասան այստեղ, ուր Ագուավն եր, Բայց ձիյերը, կորցրած իրենց վերջին ուժերը, յետ զլորվեցին, արորելով հեծվորներին: Զիերը թողնելով՝ հեծելազորայինները գժերի պես վեր մազլցեցին, աչքը չհեռացնելով իրենց հրամանատարից:

Ագուավը ուրախացավ: Նրա առաջ մահն եր, բայց սիրտը թեթև եր: Նա տեսավ, վոր ծարավի խենթությունը իր մարդկանց վրայից ընկափ: Հիմա կարելի յեր սկսել: Զունաիդ խանի հեծյալները վորոշակի կերպով յերևում եյին: Ագուավը նենգորեն ժպտաց և թեթևորեն ցատկեց թամբի վրայից: Նա պառկեց ավազաթմբին, անշատապ կարգի բերեց ուսերը և սկսեց կրակել հանգիստ և ուշադիր կերպով: Նրա ամեն մի կրակոցը գլորում եր ձիուն, կամ խլում հեծվորին իր թամբից:

Չնայած իրենց կորուստներին, հարձակվողները հասան ավազաբլրի ստորոտին: Ագուավը շարունակում եր ժպտալ: Աժմ նրանց առաջ մի մեծ վերելք կար: Յեթե նրանք բլրով բարձրանան, նա մի տասնյակ ել կփոխ:

Ինչպես յերևում եր յոմուղ-չոբաններն ել այդ հասկանում եյին: Ավազաբլրի ստորոտին արշավելով՝ նրանք թեքվեցին դեպի աջ, և սուրացին ավազաթմբի լայնքով: Նրանք նկատի ունեյին կողքի սլացիկ զառիվայրով տիրանալ ավազաբլրի գագաթին:

Բայց դրա համար նրանք Ագուավի մոտով արշավելիս՝ կորցրին ևս չորս մարդ: Բայց ահա մի ըովելից հետո ժամը հնչեց: Խանի թիկնապահները սուրացին ուղիղ նրա վրա ամբողջ թափով: Մի քանիսը արդեն չափազանց մոտեցել եյին գագաթի ծայրին: Ներքելից, կարմիրբանակայնների կողմից իրար վրա վորոտում եյին կրակոցները: Մի քանի մարդ ել իրենց ձիյերով զլորվեցին կարմիր բանակայինների կողմը: Նրանց հենց տեղն ու տեղը կոչնչացրին: Մնացած չոբանները մոտենում եյին և արդեն մի քանի տասնյակ քայլի վրա եյին գտնվում:

Ագուավը պառկած, շրջկեց նրանց կողմը և շշմեցուցիչ արագությամբ բաց թողեց իրար յետեից հինգ գնդակ: Եվ յերեք հեծյալներ ցած տապալվեցին: Բայց Ագուավը այդ չտեսավ: Ողում խաղացկուն ճոճվեց թոկի ողակը (արկան) և կակուղ ողը, մարակելով հրամանատարին, թևերը սեղմեց կողերին:

Գագաթին խուժելով, կարմիրբանակայինները յետ մղեցին հեծյալ խմբին, բայց Ագուավին չազատեցին: Յերևում եր, ինչպես ցած եյին թռչում ձիավորները, իսկ նրանց յետեից թռչկոտում եր և ձգվում մի մարմին, վեր հանելով սև ծիփի նմանող փոշու սև մի շեղ:

— Հրամանատար, — կանչում եյին մարտիկները  
սոսկումի և հուսահատության մեջ:

Յեվ հրացանային կրակը թնդաց բարձրունքից:

— Հրամանատարը իր կյանքը նետեց Ծարավի  
կշեռքի վրա, և մեր նժարը իջավ ցած—ասաց Մահոման:

Բայց նրան վոչ-վոք չհասկացավ: Նա պառկած  
եր բոլորի հետ միասին ավագի վրա և կրակում եր,  
սրբելով արցունքները, վորոնք ցայտում եյին աչքերից:

Առանց վորեւ հրամանի մարդիկ իմացան ինչ պիտի  
անել: Քաշ տալով վոտները, մոտենում եյին նոր մար-  
տիկները, և խանի բանակատեղու վրա տեղացող կրակը  
սաստկացավ: Մարդկանց մի մասը շարունակում եր  
կրակոցը, իսկ մյուս մասը թռավ ձիյերին:

Մարդկանց սարսափելի գրգռվածությունն ասես  
թե ձիյերին եր անցել: Սայթաքուն դոփյունով ես-  
կադրոնի կեսը զառիվայրից ներքեւ սուրաց: Յերեսում  
եր, վոր Զունախդ խանի քարավանում խուճապ եր  
սկսվել: Ուղտերը սաստիկ վախկոտ են: Հիմա, յերբ  
նրանցից մի քանիսը վիրավորված եյին, կենդանիները  
անից սկսեցին իրար անցնել և իրենց քշողներին կրծոտել:  
Զունախդը տեմնելով, վոր ուղտերին տանել չի լինի՝  
հրամայեց բոլոր տկերը պատռել և թափել ամբողջ  
ջուրը: Բայց ուղտերին մոտենալը միանդամայն ան-  
հնարին եր: Բացի դրանից կարմիր հեծելազորը հեռու  
չեր և քառատրոփ մոտենում եր ջրին:

Մոտ հարյուր թիկնապահներ փորձեցին յետ  
մղել և առաջ խաղացին նրանց դեմ: Բայց վոչինչ չեր

կարող պահել այն մարդկանց, վորոնք դեպի ջուրն եյին  
նետվում: Գաղանացած ու խելահեղ՝ կատաղի ձիյերի  
վրա, նրանք իսկույն վշրեցին չորանների զիմադրու-  
թյունը և փախցրին նրանց: Հեծյալները չեյին նկա-  
տում, վոր ուռայի փոխարեն նրանք գոռում եյին.

— Զուր, զուր:

Արշավանքի մահացու տանջանքները, վիրավորների  
ձիչերն ու տնքոցները ամեն, ամեն ինչ սուզվեց զով  
և թարմ ջրի մեջ: Զուր ինչքան ասես կար: Ազուավը  
չեր սխալվում: Մոտ յերկու հարյուր ուղտեր ծանրա-  
բեռնված եյին ջրով լի տկերով: Շատ մարդիկ նկատե-  
ցին, վոր ջուրը տաք ե և աղի և տկերից ել ձյութի համ  
եր տալիս, բայց ելի մեծ ագահությամբ խմում եյին:  
Մի քանի տկերից ջուրը լցրին տախտակի կլոցները  
և ջրեցին ձիյերին: Այդ բոլորը տեսեց մի բոտեյից վոչ  
ավել, բայց մարդկանց թվում եր, թե նրանք արդեն մի  
քանի ժամ ե՝ ինչ ջուր են խմում: Հանկարծ նրանք  
ուշի յեկան, լսելով Մահոմայի աղաղակը,—

— Ազուավ, Ազուավ:

Մյուս ձիյերի հետ ջուր եր խմում նաև եսկա-  
դրոնի ընկած հրամանատարի նժույգը: Նա խմում եր,  
առանց ջրից կտրվել կարողանալու: Վոչ հեռու Մա-  
հոման տեսավ նաև Ազուավի դիմումը: Նա ընկավ դիմ-  
կին և սկսեց լալ և պատմել կնոջ նման: —

— Դու չճաշակեցիր թարմ ջուրը, և հրամանատար,  
և քո շուրթերը փակվեցին: Քո կյանքը մեր նժարը  
իջեցրեց:

Զիավորների մեջ շարժումը սկսվեց։ Զունախդի  
չոքանները քամու նման սլանում եյին դեպի քարա-  
վանը։ Մահոման խփեց իր կրծքին և, քնքորեն շոյելով  
մեռած հրամանատարի ուսերը, վերցրեց հրացանը։

Զիավորները իրենք ել այդ չնկատելով, մոքն-  
չում եյին գաղանների պես։ Նրանք վերջապես հա-  
սել եյին ջրին և հիմա ինչ-վոր մարդիք ուզում են  
նորից խլել այն իրենցից։

Դասակապետների հնչուն հրամանները մի ակնթար-  
թում կատարվեցին։ Զունախդի չոքանները ամբողջ  
պատերազմական տարիների ընթացքում այդպիսի  
հակահարձակում չեյին տեսել։ Զիյերը վոլորվում  
եյին փոշու մըրկում և դուրս եյին ցատկում այդ  
մըրկի միջից առանց հեծվորների։ Յեկա մի ըռպե, և  
մորթե փափախներով ծածկված ու կերպարանքներն  
ավազաբլրի յետեռում անհետացան։ Նրանց յետերից  
վորոտում եյին արագությամբ համազարկերը, վորոնք  
գետինն եյին փոռում մերթ մեկ, մերթ մյուս հեծյալին։

## ԶՐԻ ԳՒՆԸ

Վողջ վրանախմբի վրա տարածվեց լռությունը։  
Կարմիրբանակայինները թաղում եյին իրենց հրամա-  
նատարին։ Համազարկերի վորոտից, թաղման խոպոտ  
հիմնից հետո նորից սկսեց աճել խանդավառ աղմուկը։  
Առաջին դասակի պետը, վորը իր վրա վերցրեց ամ-  
բողջ վաշտի պետի կոչումը, կարգադրություններ եր  
անում, պատրաստվելով յետ դառնալու։

Յերբ նրան թվաց, թե ամեն ինչ արդեն պատրաստ  
է, նա մոտեցավ Մահոմային։ Ուղեցույցը մտածկոտ  
նստել եր ինչ-վոր հակի վրա և վոչ մի մասնակցու-  
թյուն չեր ցույց տալիս ընդհանուր իրարանցմանը։

— Մահմա, վոր ճամբով ավելի լավ կլինի մեզ  
վերադառնալ, — հարցրեց նոր հրամանատարը։

— Ամենալավ ճանապարհը այն ե, վորով գնալիս  
մենք ջրի նեղությունը չքաշենք։ Դրա համար ել  
ավելի լավ ե նստել եստեղ։

Դասակապետը ծիծաղեց.

— Մազալու մարդ ես, ախալեր...ինչ ե, ձմեռվան  
ենք սպասելու... եղած դժվար թե ձմունը հասնենք։

Մահոման շարունակեց։

— Ամեն մի ավազաբլրի յետեկից մեզ վրա հարձակ-  
վելու յեն։ Դու ուզնեմ ես եղ։

— ԶԵ, — աշխուժ պատասխանեց դասակապետը։

— Դե վոր եղած ե, նստիր եստեղ, — մոայլ պա-  
տասխանեց Մահոման։

Նա Սգուավի մահից շշմել եր և զրուցելու սիրտ  
չուներ։

Հրամանատարը տեսավ, վոր նա դուրս գալու  
մասին արած իր կարգադրությամբ շտապեց։ Դրա  
համար ել նա նստեց յոմուղի կողքին և փաղաք-  
շանքով ասաց.

— Մահոմա, դու մի լոկր. խորհուրդ տուր։

— Ինչքո՞ն ժամանակ ել պետք եր մեզ, վոր մենք  
կործանվեյինք, — հարցրեց Մահոման։

— Դժվար թե մի որ ել դիմանայինք, — պատասխանեց դասակապետը, — բոլորս ել վոտներս կփռեյինք,

— Վոր եղան ե, յեկ եդ մի որը սպասենք: Թող խանի չորանները վոտները փուեն: Ես տեղերում ջուր չկա, — ասաց Մահոման:

— Դե լավ, մինչև վաղը սպասենք՝ հետո կտեսնենք:

Արդեն մինչև յերեկո դասակապետը համոզվեց, վոր Մահոման ճիշտ եր ասում: Բարխանի վրա ճիշվորներ յերեացին, վորոտացին համազարկեր ամբողջ բանակատեղու վրա: Փողհարը փողը փչեց և մարտիկները պատրաստվեցին կռվի յելնել:

Մահոման հանդարտ մոտեցավ հրամանատարին, ասաց.

— Ինչու յես կովում նրանց հետ:

— Կորիր գնա, ինչու յես գծություն դրել վրեդ, — լուրջ կերպով նեղացավ դասակապետը:

Մահոման ժպտաց:

— Սպիտակ շորը ջրի և խաղաղության խոստում ե: Սպիտակ շորով թափ տուր, նրանք կգան դրուցելու: Նրանք մեկ ե, — տեղ չունեն գնալու: Այս յես քեզ ասի, վոր ես տեղերում ջուր չկա:

— Գնա, ինքդ խոսիր նրանց հետ: Վզիդ վոր թոկի ողակը զցեցին՝ կիմանաս, — պատասխանեց դարձակետը:

Մահոման պատասխանի փոխարեն վերցրեց ուղբեկի սպիտակ չալման, ամրացրեց նրան փայտին և սկսեց թափահարել ոդում:

Կարմրը բանակատեղուց դուրս յեկան՝ նրանց վոր իսկույն կրակոցները դադարեցին: Մահոման նստեց ձիուն և առաջացավ իր սպիտակ դրոշով: Հրամանատարը վերցրեց փողհարին և հինգ ձիավորներին ու հետեւեց նրան:

Յերբ նրանք բանակատեղուց դուրս յեկան՝ նրանց մոտեցան հինգ չորաններ, վորոնք զինված եյին հրացաններով: Նայելով նրանց դեմքին, կարմրը բանակայինները կարող եյին տեսնել. թե ինչպես եյին իրենք այդ ծարավ որերին, Չորանների կարմրատակած յերեսներին արյուն եր իջել և ծածկվել թանձր ավագով: Բոլը քված արնոտ աչքերը խելազարի նման եյին, Բոլը շըթունքներն ել կապույտ եյին և արյուն եր կաթում նրանցից:

Մահոման առանց արևելյան նախարանների հարցը եց.

— Ախպերտիք, ես ինչի՞ խանը եղքան շատ ջուր ուներ:

— Նա խնայում եր ջուրը, վորովհետեւ յերկար ճանապարհ ուներ գնալու, — պատասխանեց մոտիկ չորանը: Նա լիզեց իր չոր շըթունքները և լոեց:

— Յես վախենում եմ ձեզ հետ զրուցել, քանի վոր ձեզ մոտ զենքեր կան, — ծաղրանքով ասաց Մահոման: — Բայց յեթե ուղում եք, յես ձեզ ամեն մի դենքի և ձիու համար յուրաքանչյուրիդ կտամ կես զավաթ ջուր:

Չորանը հայէոյեց, բայց Մահոման սիրավիր շարունակեց.

— Յես ջրի գինը զիտեմ: — Յեթե չեք ուզում՝  
գնացեք խաղաղությամբ և թող ալլահը ձեզ ոգնի:

— Գոնե մի գավաթ տուր, — ասաց ծերունի յու-  
մուդը առաջ գալով:

— Վաչ, — հաստատ պնդեց Մահոման: Դուք սպա-  
նեցիք մի մարդու, վոր ձեր բոլորիցդ բարձր եք: Հիմա  
յես ձեզ միայն քառորդ գավաթ կտամ, իսկ մնացածը  
դուք կստանաք այն ժամանակ, յերբ կրերեք այն  
մարդուն, վորը թոկի ողակ նետեց մեր հրամանատարի  
գլխին:

Նա նորից ձին յետ շըջեց: Հովիվները նայեցին  
իրար և ծերուկը ասաց.

— Մենք համաձայն ենք:

Մահոման իջավ ձիուց և դանդաղորեն սկսեց ար-  
ձակել փոքրիկ մի տիկ: Նա կարծես թե սրբազան մի  
արարողություն եր կատարում ջուր լցնելով: Յերբ  
վոր նա փոքրիկ մի գավաթ քառորդի չափ լցրեց՝  
վոր մի կումից ավելի չեր լինի, — ծերունին խեղդվե-  
լով պարզեց ձեռները, բայց Մահոման որորեց գլուխը  
և ասաց.

— Իջիր ձիուց և հանձնիր հրացանդ:

Յոմուգը հեկեկաց և հանձնեց շփոթված կարմիր  
բանակայիններին հրացանը, փամփուշները և ձին,  
Ծերունին վողողեց բերանը և վայելքի զգացումով  
կուլ տվեց ջուրը: Մնացածներն ևս մեկը մյուսի  
յետեց շտապում եյին հանձնել ձին ու զենքերը և  
ստանալ գավաթը: Յերբ հակառակորդի հինգ պարլա-

մենայորներն անզեն մնացին ավաղի վրա, Մահոման  
խնամքով կապեց տիկը և հեծավ ձին:

Ծերունին յեկավ և գլուխը հակեց նրա ասպան-  
դակներին:

— Գթա, — ինչպես մենք բերենք այն մարդուն,  
քանի վոր նա զենք ունի:

— Դուք նրան կարող եք խաբել, — պատասխանեց  
անողոք Մահոման:

— Թող մարդիք ջրից կշանան, դև, — վրդովված  
գոռաց դասակապետը, — խղճահարված:

— Նրանք սպանեցին Ազուավին, — անդրդիմի պա-  
տասխեց Մահոման, — ապա լոռությամբ ձիու գլուխը  
դարձրեց գեպի բանակատեղին: Մյուսները հետեւցին  
նբան: Դեռ չեյին հասել նրանք վրանախումբը, յերբ  
դասակապետը տեսավ, վոր յետելից ավաղներին յե-  
րկացին մոտ հիսուն ձիավորներ:

— Ինչքան ել շատ են նրանք, — հանկարծ չընկնեն  
մեզ վրա, — ասաց դասակապետը վախեցած:

— Յերբ Ազուավը տափաստանում տեսավ սպիտակ  
փալասը, վորն արյունով եր ներկված, — ասաց վոր  
նրանք հարյուրից ավելի չեն լինի, — պատասխանեց  
Մահոման և տիմրությամբ ավելացրեց, — Ազուավը իմաս-  
տուն մարդ եր, կեսը սրանք են, կեսն ել պահ են  
մտել: Այդ ե բոլորը:

— Ի՞նչ անել հիմա, — տես նրանք կանչում են  
մեզ, — ասաց դասակապետը, ձեռքով ցույց տալով:

— Ինձ տուր քո ատրճանակը, — չարագուշակ կեր-  
պով ասաց Մահոման:

Դասակապետը պատյանից դուրս քաշեց ատրճանակը և ամեց յոմուղին։ Մահոման հանգիստ զննեց այն և կոխեց իր գոտկում։

— Ուրեմն դու կարծում ես չե՞ն հարձակվի, — տագնապով հարցրեց դասակապետը։

— Դու նրանցից ել չես լսի վոչ մի կրակոց, — համենայն դեպս թող մնացած կարմիրբանակայինները պատրաստվեն։

Դասակապետը մեկին ուղարկեց վաշտը, իսկ ինքը ձին շրջեց ուղեցույցի յետելից։ Հինգ վոտովի չորանները և յերկու նորերը իրենց զենքերով և ձիյերով, — սպիտակ շորով շարժվում եյին դեպի իրենց։ Զիավորներից մեկի յետելից գալիս եր անգեն, ձեռնիրը կապված, սև մետաքսի խալաթով մի յոմուղ, վորին կապել եյին թոկով։

— Ահա, — մոտենալով ասաց ծերունին, — ձեռքով ցույց տալով կապված մարդուն, — դա խանի ոգնականն ե։ Նրա թիկնապահների պետը։ Նա նետեց ողակը քո հրամանատարին։

Մահոման պատասխանի փոխարեն մոտեցավ կապված մարդուն և գնդակեց նրան ճակատից։ Յոմուղները ծպտուն չհանեցին։ Մահոման հանգարտ իջավ ձեռւց և տվեց նրանց ևս մի քառորդ գավաթ ջուր, — առանց սակայն մի կաթիլ ավելացնելու։ Յերկու նոր յեկածները տվին իրենց հրացանները։ Յերբ նրանք ուղեցին ձիյերից իջնել, — յերկուսն ել ընկան ավաղին։

— Մեռնելու յեն մարդիկ, — իսկապէս, — չարանենգություն մի անի, — ասաց դասակապետը, ցույց տալով պառկածների վրա... ի՞նչ ես դու...»

Մահոման յերկսին ել տվեց կեսական գավաթ ջուր և դիմելով բոլոր անդեն մարդկանց՝ ասաց.

— Իսկ մնացածների հետ յես կզրուցեմ վաղ առավոտվանից վոչ շուտ։

Նա ձեռքով ցույց տվեց դեպի չորանների լուսակյաց զինված վաշտը, վորի աչքերի առաջ հենց նոր նախից խանի թիկնապահների պետին։

— Միայն թե թող նրանք բերեն ինձ այն, ինչ պետք ե, — հասկանում եք։

Նա կամացուկ և արագ ինչ-վոր բան ավելացրեց։ Անզին յոմուղները յետ-յետ գնացին նրանից և նրանց հայացքներում վառվեց ծայրահեղ սոսկում։

— Թող անիծյալ լինի քո ջուրը, — ասաց ծերունին։ — մի գավաթի համար դու պատրաստ ես մեզ արյունով կշտացնել։

— Դեռք հարձակվեցիք Դարգան-Ատա ուազիսի վրա, բայց յես ձեզ վրա չեմ բարկանում։ Թող ոգնի ձեզ ալլահը, վորպեսզի դուք չտեսնեք Ծարավի դեմքը և ավազներով հորդող Դարյան, — մոայլ պատասխանեց Մահոման։

Յոմուղները լուսթյամբ շրջվեցին և յետ գնացին։

— Ինչ սատանա յե և ինչպես չար. — պատկառանքով և վախով ասաց փողհարը։

— Նրանք սպանեցին Ազուավին, — կարծ պատասխանեց Մահոման:

Բոլորը դարձան բանակատեղին: Վոչ վոք վոչ մի խոսք չարտասանեց:

— Գիշերը նրանք վերջին անգամ կհարձակվեն ջուր վերցնելու: — Պատրաստվիր, — մտածկոտ ասաց Մահոման, դիմելով դասակապետին: — Յես նրանցից սարսափելի բան պահանջեցի և նրանք նախ քան այդ կատարելը՝ հարձակվելու յեն:

Վերադառնալով բանակատեղին, Մահոման ինքը դեկավարեց աշխատանքը: Ապրանքների հակերը դարսեց կոր պարի ձեռվ: Մեջտեղը պառկեցրին ջրով բարձած ուղտերին: Հենց այդտեղ ել, այդ շուտափույթ պատրաստած ամրության մեջ տեղափորեցին կանաց: Մնացած հակերը տարան և բանակատեղու շուրջը սարքեցին որս կողմից չորս բարրիկադ:

Հենց վոր իջավ գիշերը, յոմուները կրակ բացեցին: Առավոտվա դեմ նրանք հեծելազորային հարձակման դիմեցին, բայց բարրիկադներից թափվող կրակից ջարդվեցին: Հետո ամեն ինչ լոեց և լսվում եր միայն ավագներին մնացած վիրավոր չորաների տնքոցը: Նրանց առին բերին բանկատեղին և ջուր խմացրին:

### ՄԱՀՈՄԱՅԻ ԴԱՏԸ

Յերբ լուսացավ, ավագաբլի վըա մարդիկ յերեացին, վորոնք շորով թափահարում եյին:

— Գնանք, գնանք, շնւտ, — գրգոված ասում եք Մահոման.

— Եգինչե, նրանք մեկ խոսում են, մեկ կրակում: Բայց Մահոման շարունակում եր պնդել:

— Շատ կարմիրբանակայիններ վերցրու հետդ, վերցրու կեսը, — ասաց Մահոման և ավելացրեց, — և շատ պարան վերցրու:

Դասակապետը ել չվիճեց, նա արդեն նախորդորը համոզվեց, վոր ուղեցույցը իր արածը գիտի:

Յերբ նրանք մոտեցան ավագաբլին, նրանց դեմ որորվելով և ընկնելով, դուրս յեկան յոթ հետեակ անզեն մարդիկ: Առջեկց դալիս եր մի ծերունի: Նա մոտեցավ և հնազանդ կերպով Մահոմային ավեց մի արնաներկ փաթեթ: Նրա դեմքին անոգնական մի սոսկում կար: Հազիվ լեզուն շարժելով՝ նա թոթովեց.

— Այստեղ ութսուն մարդու կյանքն եւ: Մենք ուզում ենք հետ խոսել: Ընդունիր այս, ինչ պահանջում եյիր:

Նա մոտեցավ, և Մահոմայի ձին մի կողմ նետվեց: Մահոման դողդջուն ձեռներով վերցրեց փաթեթը, բաց արավ, կարմիրբանակայինները սարսափով և հետաքրքությամբ նայում եյին յերկար, ալեխառն միրուքով դաժան մեռյալ դեմքը: Մահոման ևս նայում եր սպանալից խանի մեռած, փակ աչքերին, հետո գլուխը կոխեց խուրջինը և դանդաղ ասաց:

— Դուք սուտ չասիք: Յես տեսնում եմ, վոր դուք ուզում եք բանակցել: Խանը կործանվեց, վո-

բովիետև նա ջուր չուներ: Ի՞նչ կարող ե լինել ավելի  
թանգ, քան պաղ, մաքուր ջուրը: Դուք ամենքդ ել  
կստանաք այս ջրից, բայց թող ձեզանից ամեն մեկը  
գա այստեղ և ավաղի վրա դնի իր գենքը:

Յոմուդները լսեցին, հանգանդորեն դլուխները  
խոնարհելով և ձեռները կրծքին խաչձելով: Բար-  
խանի յետեկց զուրս յեկան չոբանները: Նրանք ըն-  
թանում եյին իրարից քսան քայլ հեռավորությամբ:  
Յուրաքանչյուրը կանգ եր առնում յերկու հարյուր  
քայլի վրա, զցում եր հրացանը և փամփուշտները  
և մոտենալով հանձնում եյին ձիյերը: Մահոման յու-  
րաքանչյուրին քառորդ գավաթ ջուր եր տալիս, իսկ  
կարմիրբանակայինները կապում եյին նրանց:

Յերբ անձնատրության բոլոր ձեականություն-  
ները կատարվեցին և զենքերով բարձված ձիյերը յետ  
տարվեցին լագերը, Մահոման դասակապետին դիմե-  
լով ասաց.

— Իսկ այժմ թող արձակեն այս բարի մարդկանց  
ձեռները և թող նրանք գնան ուր ուզում են, — և  
անողոք յերեսապաշտությամբ նա ավելացըրեց, — մենք  
չենք դիպչի նրանցից վոչ մեկին:

— Դու եղ ինչ ես մարդկանց ձեռ առել, ծիծաղում,  
մարդասապան, — զոռաց դասակապետը, խղճահարությու-  
նից և սարսափից կարմրատակելով. — չե, եղ ձեզ մոտ  
կարող եք եղակես բաներ անել... իսկ մեզ մոտ...

Գերիների մեջ հուսահատական ճիշ բարձրացավ,  
բայց Մահոման հանգիստ պատասխանեց.

— Քո մոտի ջուրը մեզ ամենքիս տաս որ հերիք  
կանի, Մեզ հարկավոր ե անասունն ել ջրել, Մենք  
պիտի դանդաղ գնանք, շատ ավելի դանդաղ, քան  
այստեղ գալիս, քանի վոր մեզ հետ կանայք կան:  
Մտածել ես դու այդ մասին:

— Դե եղ արդեն վոնց վոր յեղավ... մի կերպ  
կանենք: Բայց եղակես չի կարելի:

— Նրանք սպանեցին Ագռավին, — անհագ ատե-  
լությամբ ասաց Մահոման:

— Եդ ճիշտ ե... իսկ ինչպես նրանք... Չե, ախ-  
ակեր, քանի վոր նրանք անձնատուր յեղան...

— Նրանք անձնատուր չեղան: Նրանց ջուր եր  
պիտք: Նրանք զենքնու ձիյերը վաճառեցին ջրով, — պա-  
տասխանեց Մահոման: Ամեն մի ճիռ և զենքի համար  
յես նրանց տվի քառորդ գտվաթ ջուր: Յես վերջացրի  
առևտուրը. բաց թող այդ մարդկանց և թող նրանք  
գնան խաղաղությամբ:

Նա ճին յետ շրջեց: Գերիները լուսւթյամբ ծունը  
իջան, ինչպես այդ մի ժամանակ ուզբեկներն եյին  
անում Խանի առաջ:

Դասակապետը անձկությամբ մտրակով խփեց  
ճիտքերին:

— Դե լսիր, եղակես սատանի կերպարանք մի  
առնի, ավելի լավ ե մի բան մտածի:

— Յեթե զու ուղում ես, յես ես մարդկանց  
կղատեմ, — ասաց Մահոման, — մի վախենա, զու զո՞ն  
կմնայ:

Պատասխանի չսպասելով Մահոման մոտեցավ մարդկանց, վորոնք դեռ ծնկների վրա և յին մնացել.

— Մենք քիչ ջուր ունենք, — Բայց մենք կարող ենք ձեզ ազատել և դուք կենդանի կմնաք: Դուք ընկաք ուզիսի վրա, այբեցիք աներ, շատ մարդիկ կոսորեցիք, խլեցիք կանանց և տափարը քշեցիք: Յերբ Բախտը պարզեց ձեռքը, ձեր թասը Ծարավի կշեռքի վրա վեր բարձրացավ:

Մի բոպէ Մահոմայի ձայնը կտրվեց: Նա նորից հիշեց Ագուավի մահը: Հետո նա տիրապիտեց իրեն և շարունակեց.

— Բայց դուք կարող եք ձեր չարագործությունները հատուցել: Դուք ձիյերը կստանաք և դրա հետ նաև յերկու որվա ջուր: Դուք կգնաք և դուրս կհանեք այն բոլոր քարերը, վորոնք լցըել եք Ոթուզ-Կուլաչ ջրհորում: Այս ձեռք ևս դուք կմաքրեք այն բոլոր ջրհորները, վորոնք լցըել եք:

— Այ, եղ ձիշտ ե, — աշխուժությամբ ասաց դասակապեար: Մի բան, վոր փչացըել ես, պիտի սարքես:

Մահոման շարունակեց.

— Բացի դրանից, մի ամբողջ տարի դուք պիտի աշխատեք Դարգան-Ատա ուզիսում, վորպեսզի ձեր կատարած ավերումները ուղղեք: Յերդվում եք կատարել այս բոլորը:

— Յերդվում ենք, — հառաչեց ամբոխը:

Գերիները վեր կացան և գնացին դեպի լագերը: Մահոման քառատրոփի առաջ արշավեց: Յերբ դասակա-

պետը առանց շատապելու մոտենում եր լագերին, տեսավ վոր ուզբեկները ամբողջ բազմությամբ աղմկում և ձեռները թափ եյին տալիս Ագուավի գերեզմանի մոտ: Մահոման հրամանատարի վոտների մոտ հոր փորեց և հանդիսավոր կերպով ասաց.

— Ագուավ: Դու մեռար և չխմեցիր մաքուր ջուրը: Բայց քո վոտների տակի հողը յես խանի արյունով եմ կարմրեցնում:

Մահոման գլուխը նետեց փոսի մեջ, ավաղով ծածկեց փոսը, ապա խնամքով ավազը վոտքով կոխուտեց:

Պատասխանի չսպասելով Մահոման մոտեցավ մարդկանց, վորոնք դեռ ծնկների վրա եյին մնացել.

— Մենք քիչ ջուր ունենք, — բայց մենք կարող ենք ձեզ ազատել և դուք կենդանի կմնաք: Դուք ընկաք ուազիսի վրա, այրեցիք աներ, շատ մարդիկ կոտորեցիք, խեցիք կանանց և տավարը քշեցիք: Յերբ Բախտը պարզեց ձեռքը, ձեր թասը Ծարավի կշեռքի վրա վեր բարձրացավ:

Մի րոպէ Մահոմայի ձայնը կտրվեց, Նա նորից հիշեց Ագուավի մահը: Հետո նա տիրապիտեց իրեն և շարունակեց.

— Բայց դուք կարող եք ձեր չարագործությունները հատուցել: Դուք ձիյերը կստանաք և դրա հետ նաև յերկու որվա ջուր: Դուք կդնաք և դուրս կհանեք այն բոլոր քարերը, վորոնք լցըել եք Ոթուղ-կուլաչ ջրհորում: Այս ձեռվ ևս դուք կմաքրեք այն բոլոր ջրհորները, վորոնք լցըել եք:

— Այ, եդ ճիշտ ե, — աշխուժությամբ ասաց դասակապեար: Մի բան, վոր փչացըել ես, պիտի սարքիս:

Մահոման շարունակեց.

— Բացի դրանից, մի ամբողջ տարի դուք պիտի աշխատեք Դարգան-Ատա ուազիսում, վորպեսզի ձեր կատարած ավերումները ուղղեք: Յերդվում եք կատարել այս բոլորը:

— Յերդվում ենք, — հառաչեց ամբոխը:

Գերիները վեր կացան և գնացին դեպի լագերը: Մահոման քառատրոփ առաջ արշավեց: Յերբ դասակա-

պեար առանց շապակելու մոտենում եր լագերին, աեւսավ վոր ուզբեկները ամբողջ բազմությամբ աղմկում և ձեռները թափ եյին տալիս Ագուավի գերեզմանի մոտ: Մահոման հրամանատարի վոտների մոտ հոր փորեց և հանդիսավոր կերպով ասաց.

— Ագուավ. Դու մեռար և չխմեցիր մաքուր ջուրը: Բայց քո վոտների տակի հողը յես խանի արյունով եմ կարմրեցնում:

Մահոման գլուխը նետեց փոսի մեջ, ավազով ծածկեց փոսը, ապա խնամքով ավազը վոտքով կոխուտեց:

30

Лента 30 коп.



А. СПИНН

В. НЕСКРЫХ

(Лебедев & Лакерто)

Н. А. ДВОРЧКОВА-БАРБЕ

Ф. И. С. Б. 9. 8. 9. 8. 9.  
Ш. 6. Р. 9. Р. 1. 8. 0. 4. 3. 0. 4.  
0. 1. 9. 0. 4. 7. 9. 4.

ФГБУ Москва, Никольская, 10.



ПРОДУКЦИЯ ГОСУДАРСТВЕННОЙ  
МОСКОВСКОЙ НИЗКОВОЛТАЖНОЙ  
ЭЛЕКТРОСЕТИ

Հայաստանի պատմութեան մասին



NL0318939

13.513

30 коп. -29913

Цена 30 коп.

Х. 3.



---

А. СЫТИН

**В песках Каракума**

(Перевод с русского)

---

На армянском языке

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.  
Москва, центр, Никольская, 10.